

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈԼԿ ՕՐԳԱՆԻ ՏՐԱՎԵՐ

Կոմական

Խ Տիգրենիկա Տ Պէպուզան  
հեղափոխության  
հերոս  
Ալբակ Կամոյ

Կամաց առաջ աշխարհություն  
1926 Յրեական



ՅԿՌ (0924ամ)

Պրոֆեսոր բոլոր յերկրների, սիացեք.

ԿՈՒՍՊԱՏ

Ա (Բ) ԿԻ-Ի ԿԻՑ ԲԱԺԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՑԵՎ ԱԿԿ (Բ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Ս. Ֆ. ՄԵԴՎԵԴԵՎԱ — Տ.-ՊԵՏՐՈՎՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՀԵՐՈՍԸ

(«ՀԿԿ. ԿԱՄՈ»)


A 352289

Հառաջարան Պ. Լեպիշենսկու  
Ծանոթություններ Ա. Զոնինի

Թարգմ. Գ. ՏԵՐ ՀԱԿՈՅՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1926 ՅԵՐԵՎԱՆ



Գրառեալվար № 305ր.

Տիրաժ 5,000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

## ՀԱՌԱԶԱԲԱՆ

Ըսկ Կամոն, վորին նվիրված եւ այս կենսագրական ակնարկը, պարտիզանական կռվի ամենատիպիկ հերոսն եւ Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությունից հետո, յերբ առաջին անգամ 1905 թ. հեղափոխության ալիքը խորտակվեց, բաղիսվելով սեվիարյուրակային հակահեղափոխության, ալեկոծված յերկրում բաղաքացիական կռիվը ընդդեմ ամենազոր թշնամու՝ առանձին անհատների յեվ փոքրիկ խմբակների՝ զինված կռվի անսահման մանր գործողությունների ծեվ ստացավ։ Այս կռիվն ընթանում եր գլխավորապես յերկու ուղղությամբ։ առաջին, նա նպատակ եր դնում սպանել առանձին անհատների, առավելապես ռազմա-վուտիկանական կազմի պետերին ու ստորադրյալներին։ յեվ յերկրորդ՝ դրամական միջոցներ շորթել ինչպես կառավարությունից այնպես ել մասնավոր անհատներից։

Կռվի այս յեղանակը մենշեվիկները սովորաբար համարում եին անթույլատրելի անարխիզմ, բլանկիզմ, վորպես մասսայից կորված անհատ անձանց անբարոյականացնող յեվ կազմալուծող յելույթ յեվ այլն։ Սակայն բայլշեվիկները պարտիզանական կռվի փաստի վրա նայում եյին մոմենտի կոնկրետ պայմաններից յելնելով։

1906 թ. միացյալ համագումարից առաջ պար-

տիզանական-մարտական յելույթների մասին մի քանի բայլշեվիկների կազմած բանաձեվի նախագիծն ի միջի այլոց ասում ե.

«....Մենք կարծում ենք, վոր...նման յելույթների (պարտիզանական) գլխավոր անմիջական սպատակը պետք ե համարել կառավարչական, վոստիկանական յեվ զինվորական ապագարատների բայքայումը յեվ անողոք կոիվո ազգաբնակչության ճնշող յեվ սարսափեցնող սեվ հարյուրակային գործոն կազմակերպությունների դեմ. վոր թույլատրելի յեն նայեվ մարտական յելույթներ՝ հափշտակելու համար թշնամուն, այսինքն ինքնակալ կառավարության պատկանած դրամական միջոցները, յեվ այն գործադրելու հեղափոխության կարիքների համար. ըստ վորում հարկ ե լուրջ ուշադրություն դարձնել, վոր ազգաբնակչության շահերը վորքան հնարավոր ե քիչ տուժեն»:

Ընդունելով, այսպես, տվյալ շրջանում կովի պարտիզանական մեթոդը թույլատրելի ու նպատակահարմար, բայլշեվիկյան բանաձեվը չի մոռանում մի հիմնական վերապահում, վոր «պարտիզանական մարտական յելույթները պետք ե տեղի ունենան կուսակցության հսկողության տակ, յեվ ապա այնպես, վոր պրոլետարիատի ուժերը զուր չվատնվեն յեվ վոր միաժամանակ ի նկատի առնվեն տվյալ վայրի բանվորական շարժման պայմանները յեվ լայն մասսանների տրամադրությունը:»

Նույն տեսակետն ուներ նաև Վլադիմիր Իլյիչը. Մենշեվիկների կողմից բաղաքացիական պարտիզանական յեղանակը անվերապահորեն դատապարտելը,

վորպես անարխիզմի յեվ բլանկիզմի անթույլատրելի ծեվ յեվ այլն, նրա կողմից խիստ պատասխանի արժանացավ (տես. որ. նրա հոդվածը «Պարտիզանակ. պատերազմ» «Պրոլետարի» № 5-ում 1906 թ. սեպտ. 30-ի): Հոդվածն արտատպված ե Ն. Լենինի յերկերի ժողովածուի VII հատ. մաս 2.): «Յերբ տեսնում եմ սոցիալ-դեմոկրատներին,—զրում ե Լենինը հիշյալ հոդվածում,—հպարտորեն յեվ ինքնաբավական, հայտարարելիս, թե մենք անարխիստներ չենք, գողեր, թալանչիներ չենք, մենք դրանից բարձր ենք, մենք մերժում ենք տարտիզանական պատերազմը,—այն ժամանակ յես ինձ հարց եմ տալիս.—հասկանում են արդյոք այս մարդիկ. թե ի՞նչ են իրենք ասում»: Յեվ խնդրի եյությունն վարպետորեն վերլուծելով, նա ապացուցանում ե այն միտքը, վոր քաղաքացիական պատերազմների այս կամ այն ծեվի «սկզբունքային» ժխտումը, ինչպես յեվ նրանց գնահատումը բարոյական սկզբունքներից յելնելով՝ անթույլատրելի յեմարքսիստական տեսակետից: Յերբ քաղաքացիական կոիվը կատարված փաստ ե դառնում, դրանից հետո նա վոչ թե վեճի առարկա պիտի դառնա, այլ յելակետ՝ հետագա գործողությունների համար: Քաղաքացիական կովի մեթոդների խնդիրը զուտ տեխնիքական խնդիր ե, նման մեթոդի տվյալ վայրի ու ժամանակի պայմանների տեսակետից նպատակահարմար ու տեղին լինելու կոնկրետ խնդիր: 1905 թ հեղափոխության առաջին պարտություններից հետո սկսված պարուղանական կոիվները—այդ նախ յեվ առաջ վոչ թե սոցիալ-դեմոկրատական շտաբների ծրագրած գործելակերպն եր, այլ հեղափոխական ստորին խավերի


անմիջական պատասխան հակահարվածը՝ ցարական պալատականների յեվ զարդարարների սեվ հարյուրակային տերրորի, Յեվ սոցիալ-դեմոկրատները վոչ թե բարոյական մեղադրանքի չափանիշով պետք է մոտենային այս յերեվույին, այլ բարի ցանկությամբ՝ տիրել պարտիզանական շարժման տարերքը. ըստ հնարավորության վանել նրան ուղեկցող բացասական կողմերը, յեվ ոգտագործել նրա դրական կողմերը հոգուտ բաղաբացիական կովի, վոր այդ ժամանակ «մեծ ճակատամարտերի» միջանկյալ շրջան եր ժավակոխել:

Ճիշտ ե, հաճախ պարտիզանական կովի հերոսը լինում ե վոչ թե կուսակցական կարգապահության բարձր գիտակցություն ունեցող պրոլետարը, այլ ավանտյուրիստական բնազդներով ուժտված «տաք գոլուխ» մեկը:

Այստեղից պարզ է, թե ինչպիսի արժեք կներկայացներ պարտիզանական կովի համար մի մարդ, վորի մեջ զեղեցիկ ներդաշնակությամբ ամփոփվելին յեվ խելառ անվեհերություն՝ նման միջնադարյան հերյաթային այնպիսի հերոսներին, ինչպես Վալտեր Սկոտտի Ռոբ-Ռոյը, յեվ հեղափոխական հափշտակություն, վոր իր թափով հետ չմնար նարոդովոյան հերոսական շրջանի լավագույն ներկայացուցիչներից, յեվ անհաշտ ատելություն դեպի ցարիզմը, յեվ խիստ զարգացած անձնական բարոյական արժանիքներ-անշահասիրություն, զրկանքներով լի կյանք յեվ այլ, յեվ փորձված հեղափոխական լավ զինվորի կարգապահություն, յեվ անխորտակելի յերկաթե կամք:

Ահա հենց այդպիսին եր ընկ. Կամոն. Նա պար-

տիգանականության խոկական յեվ լավագույն հերոսն է։ Ներկա կենսագրական ակնարկի հեղինակը բնավ չի չափազանցնում, յերբ ասում ե, վոր «Կամոն կա-



Հնկ. Կամո

1922 թ. Մասկվայում հանված լուսանկարից

ըողացավ կապ ստեղծել սրանցից (արկածախնդրական, անգամ քանուիտական հակումներ ունեցող) լավագույների հետ. դուրս հանել նրանց «Խավարից — լույս», համախմբել իր շուրջը յեվ կազմակերպել խոկական հեղափոխական հոգով տոգորված, շաղախված յեվ գերազանց կարգապահ մարտական խմբեր։

Յես անծամբ բախտ եմ ունեցել մերծենալ ընկ. Կամոյին յեվ գնահատել նրա չափազանց հետաքրքրական անհատականությունը նրա կյանքի վերջին  $1\frac{1}{2}$  – 2 տարում։ Նրա հետ միեւնույն ընակարանում վորպես հարեվաններ ապրելով յես ծանոթացա նրա հոգեկան դրամային։ Կուսակցական բարձր որգանների կոսից նա «դատապարտված եր» գիտությունների վորոշ դասընթացք անցնելու, վոր անհրաժեշտ եր տեսական լուրջ պատրաստություն ծեռք բերելու, վորպեսզի ըստ այնմ պատրաստվեր բարձր ուամզահրամանատարական կազմի համար։ Նա չեր ատում գիրքը, անգամ, մասնավորապես դասագիրքը, ընդհակառակը, նա շատ բարձր եր դասում գիտության արժեքը, սակայն ամբողջ որերով նստել յեվ Կիսելյովի հանրահաշվից յերկրորդ աստիճանի հավասարության խնդիրներ վճռել այն պահուն, յերբ շուրջը հեղափոխությամբ խոռվահույզ ծովի ալիքներ եյին բարձրանում, – այդ արդեն վեր եր նրա ուժերից։ Իր տեսական պատրաստությունը շտապ լրացնելու նը-պատակով նա ամենայն սիրով ընդունում եր ընկերների ոգնությունը սերտողության ժամանակ յեվ նը-րա թուխ աչքերը ուրախ ժապտում եյին, յերբ վոր Կիսելյովի սփինքսի նրան հուսահատեցնող լոգարիթմի հանելուկը հարեվան սենյակի «իմաստուն Եղիպ»-ի ոգնությամբ շատ հասարակ կերպով վճռվում եր։

Շատ հաճախ հանրահաշվի դասագիրքը մի կողմ հրելով թախծալից հայացքը ինձ ուղղում յեվ պահանջ դնում. «անիծված հարցերին ինձ նիշտ պատասխաններ տուր»...

Ինչո՞ւ բյուրոկրատիզմը այնքան շատ ե տարած-

վել մեր կուսակցական միջավայրում։ Ինչու իրան, խռովահույզ Կամոյին չեն դնում այնպիսի գործեր, վորտեղ փորձված մարտիկի նրա հատկություններն ոգտագործվեյին։


Ինքնակալության դեմ մեր վարած կոիշերի հեղափոխական-ռոմանտիկ շրջանի այդ ամենափառավոր ներկայացուցիչը յուր հեղափոխական տեմպերամենտի խառնվածքով, ինքնին ավելի պերճախոս եր, քան առողջ բանականությունը, վոր շտապում եր հենվել իրականության վողջամիտ սկզբունքի վրա։

Ի վերջո սիրում եմ հավատալ, վոր ընկ. Կամոյի մտերիմ բարեկամ ընկ. Ս. Մեդվեդեվայի գրած այս զերմ, հոգեբուխ, անկեղծ կենսագրական ակնարկը շատ սրտովը կլինի մանավանդ բանվորական—գյուղացիական մեր յերիտասարդ սերնդի համար, վոր մեզանից, ծերերից, պահանջ ե դնում տալ հերոսական հեռավոր անցյալի մասին պատմվածքներ՝ համեմած «անարգ հրեշ»—ինքնակալական Ռուսաստանի դեմ հեղափոխական «հսկաների» վարած կովի գրավիչ դրվագներով։

Իր վողջ եյությամբ անծնվիրաբար հեղափոխական գործին տրված, իր չտեսնված ու չլսված հոգու արիությամբ, վորի շնորհիվ չորս տարի շարունակ խելագար ծեվանալով՝ զարմանք յեվ հիացմունք պատճառեց Գերմանիայի յեվ Ռուսաստանի հոգեբույժ գիտնականներին, կովկասյան լեռների զավակի այս հոյակապ, գեղեցիկ, բյուրեղանման յեվ իսկական հեղափոխականի պատկերի վրա զմայլանքով յուր հրաբորքոք հայացքը կսեվեռի մեր որերի կոմյերիտականը յեվ նրա շուրջերը կարտասանեն։

«Հավերժ փառք քեզ, ընկ. Կամո»։

Պ. ԼեՊԵՇԻՆՍԿԻ



## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԸ (ԸՆԿ. ԿԱՄՈ)

Յես միայն մի մտքի ուժ եմ խմացել.

Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել.

«Մ'ծիրի» Հերմոնտովի

(Թարգմ. Հովհ. Թումանյանի)

### 1. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Կապալառու Արշակ Տեր-Պետրոսյանի ընտանիքում 1882 թ. մայիսի 15-ին ծնվեց նրա վորդի Սիմոնը: Զնայելով նրա մոր շատ մատաղ հասակին (նա հազիվ 16 տարեկան եր), յերեխան աշխարհ յեկավ շատ ամուր և խոշոր կազմվածքով:

Նրանց տունը, պարտեզն ու խաղողի ալգին գտնվում եր գեղածիծաղ Գորի քաղաքում, վոր հայտնի չե իր ալգիներով և ընտիր մրգերով: Արշակ Տեր-Պետրոսյանի գործերը շատ լավ ելին գնում և նրանց տունը լի յեր ամեն տեսակ բարիքներով: Մառանում դարսված ելին ընտիր գինիներով, թթուներով լեցուն տակառներ, ինչպես և ամեն տեսակ պանիրներ ու ապուխտեղեն: Տանտերը ուտող-խմող մարդ եր և կեր ու խումի համար փող չեր խնայում: Յերեխայի մայրը զարմանալի հեղահամբուլը և սիրող կին եր: Ամուսնության կողմից նա յերջանիկ չեր. նրա ամուսինը, վոր տարիքով ավելի քան յերկու անգամ նրանից մեծ

եր, մի բռնակալ և ստահակ մարդ եր: Նա, վոր «անվանի» հյուրերի համար հրավերներ սարքելում, ինչպես և անձնական իր պահանջներին հագուրդ տալու մեջ շատ առատաձեռն եր,—ընտանիքի համար խնալող եր: Գծուծ և կովարար լինելով բնավ տրամադիր չեր ընդառաջելու իր կնոջ Էճգտումներին—ոգնության գալու կարիքավոր հարևաններին և ազգականներին: Խեղճ Մարոն (այսպես եր կնոջ անունը) մեծ հնարագիտություն պիտի բանեցներ, վոր ամուսնուց ծածուկ ոգներ կարիքավորներին:

Նա ջահել և գեղեցիկ եր. բայց և այնպես չեր սիրում զուգվել և հյուր գնալ: Նրա կյանքի ամբողջ իմաստը իր յերեխաններն ելին, վորոնց թիվը գրեթե 12 եր: Այս յերեխանների կեսից ավելին վախճանվել ելին. սակայն կենդանի մնացած 5 հոգին ել մեծ հոգս և ժամանակ ելին խլում նրանից: Մարոյի անդրանիկ զավակ Սիմոնը, այդ սեաչյա, կենսուրախ չարաճճին, մոր պաշտելին եր:

Սիմոնը 7 տարեկան եր, յերբ նրան տվին հայոց ծխական դպրոց: Աշխույժ յերեխան շատ ել գլուխ չուներ գրքի հետ, մանավանդ դժվարհասկանալի հայերեն գրքի հետ, վորովհետև ընտանիքում խոսակցական լեզուն գլխավորապես վրացերեն եր: Բայց նրան անտանելի դարձավ քաղաքային դպրոցը, ուր նա մտավ 11 տարեկան հասակում: Ստիպողաբար պարտադրված խորթ ոռւսերենը, ինչպես և դպրոցական ոեժիմը անտանելի ելին նրա համար: Ուստի և նա աշխատում եր դպրոցի պատերից դուրս հաճույք ստեղծել իր համար, կազմակերպելով խիզախ արշավանքներ հարեան ալգիների վրա, կամ թե չե ձեռնարկելով աղմկալի խաղեր:

Սիմոնիկի դպրոցական գործերի վոչ հաջող ընթանալը, ինչպես և նրա դեմոկրատական տարրերից ընկերներ իր շուրջը հավաքելը՝ հորը դուր չելին գալիս:

— Շատ անպետք տղա յե, ասում եր հայրը.— վոչինչ չի անում և ամբողջ ժամանակը անցկացնում ե ամենավատ յերեխաների (այսինքն աղքատ) հետ:

Սակայն մայրն այս կարծիքը չուներ: Միթե իր Ակմոնիկի նման լավ յերեխա յերբեն գոյություն ե ունեցել աշխարհում. այնքան սիրավիր ու բարի, այնքան ժիր ու ճարպիկ... Տան մեջ ինչ ել վոր փչանարկամ կոտրվեր, կարիք չկար վարպետ կանչելու, Ակմոնի ձեռքից ամեն բան դուրս եր գալիս: Նա հնարում ե մի հիանալի ձեռքի աղորիք, հիմնովին վերանորոգում ե հավաքունը և վարպետորեն բակում առու անցկացնելով՝ անձրևաջուրը հավաքում ե նրա մեջ և այսպիսով վերջ տալիս անձրևաջրի տարածվելուն բակի մեջ: Նա իր մոր հավատարմատարն ու գործակիցն եր նրա բոլոր ծածուկ բարեգործություններին: Յեվ վորքան որտագին և խելացիորեն ոգնում եր իր մորը:

Յերեխան խորին նվիրվածությամբ պատասխանում եր մոր անսահման սիրուն. և յերբ ականատես եր լինում մոր հանդեպ հոր ցուցադրած կոպիտ ու վիրավորական վերաբերմունքին, խոր ատելությամբ լցվում եր դեպի հայրը: Աչքաբաց և ուշիմ յերեխան շատ լավ նկատում եր հոր տարրեր վերաբերմունքը դեպի հարուստ հյուրերն ու չքավոր ազգականները: Նա չեր կարողանում տանել նաև հոր այս ու այն կողմ փող շպրտելը, աչքերին թող փչելու համար, մանավանդ յերբ նա այդ ծախսերը համեմատում եր այն

համեստ նվերների հետ, վոր հազիվ հաղ հաջողվում եր նրա մորը՝ բաժին հանել չքավորներին։ Տնեցիք բոլորը շատ ելին սիրում և յերես տալիս Սիմոնիկին։ միայն հայրն եր, վոր հալածում եր նրան, նրա անգուսպ և անկախ բնավորության համար։

— Ո՞վ ե այստեղ տանտերը, յես, թե այս լակոտը, ասում եր նա նեղացած։

Հոր և վորդու հարաբերությունները հետզհետե պաղեցին։ 16 տարեկան եր Սիմոնիկը, յերբ մի անգամ մոր կողմը պահելով վեճի բռնվեց հոր հետ։ Ծերունին կամեցավ խելքի բերել անհնազանդ վորդուն, բայց վերջինս այնպիսի վճռականությամբ վերցրեց կացինը, վոր հայրը ստիպված յեղավ մի կողմ քաշվել և այնուհետև զգուշ լինել։

1898 թ. յերեկոյան «վատ վարքի» համար դուրս արվեց դպրոցից<sup>1</sup>)։ Իրոք Սիմոնիկը ամենաին չեր նըկատվել վատ արարքների մեջ։ Ընդհակառակը, առողջ պատանու հոգուն բոլորովին խորթ ելին այն բոլոր անպատկառ զվարճությունները, վորոնց յենթակա յեն հիվանդու ու փչացած դեռահասներից վոմանք։

Դպրոցից հեռացվելուց հետո պատանուն զբաղեցընում եր այն միտքը, թե ի՞նչ ե անելու այսուհետեւ Նրան շրջապատող բուրժուական միջավայրն արդեն տալիս եր այդ հարցի պատասխանը. «պետք եր պատրաստվել կամավոր կերպով զինվորական ծառայության մտնելու, վոր հետո յունկերական դպրոց անցնելով սպա դառնար։ Այս նպատակով նա տեղափոխվեց Թիֆլիս իր մորաքույր՝ Յելիզավետա Անդրեյեվնա Բաղչիկվայի մոտ։ Նրա ուսուցիչներն յեղան իր հայրենակիցներ՝ գորեցիք՝ ի. Զուղաշվիլին (Ստալին) և

Վարդանյանցը, վորոնք դեռ այն ժամանակից մասնակից ելին հեղափոխական շարժման։ Մոտիկից ծանոթանալով իրենց սանիկին նրանք, մանավանդ Ստալինը, աշխատեցին առնել նրան իրենց շրջանի մեջ. ծանոթացրին հեղափոխական մարքսիզմի ուսմունքին, և հորդորում ելին կուսակցական աշխատանք տանել։ Մեր յերիտասարդը կանգնած եր յերկընտրանքի առաջ։

Այդ միջոցին նա լուր ստացավ իր մոր ծանր կերպով հիվանդանալու մասին։ Այս դեպքը նրան մոռացնել տվեց ամեն ինչ և նա վերադարձավ իր հայրենական տունը։ Իր սիրելի մոր մահը մոտալուտ եր։

Այդ տարին նրա հոր գործերը շատ վատ գնացին և վերջ ի վերջո նա բոլորովին սնանկացավ։ Տանտիրուհու ծանը հիվանդությունը և սրա հետ կապված ծախսերը քայլայում առաջ բերին տան տընտեսության մեջ։ Ընտանիքը զգաց կարիք ու զըլկանք։ Մոայլ հուսահատության մեջ եր ընկնում Սիմոնը, յերբ հիվանդի համար անհրաժեշտ դեղորայք ու սնունդ չեր կարող ձեռք բերել՝ միջոցներ չկինելու պատճառով։

Մոր մահից հետո մորաքույրը Սիմոնին ու նրա քույրերին վերցրեց իր մոտ Թիֆլիս։

## 2. ԿԱՄՈՆ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԳՈՐԾԻՉ

1901 թ. հոկտեմբերի սկզբներին նա մտավ կուսակցության մեջ, և այդ որից իր ամքողջ ելությամբ նվիրվեց հեղափոխության<sup>2</sup>)։ Կամոն, վորպես տեխնիքական կազմակերպիչ, մինչև 1903 թ. զանազան հանձնարարություններ եր կատարում։ Նկատելով նրա

անձնվիրությունը, և զնահատելով նրա համարձակ, հնարագետ և անխոնջ աշխատանքները, սկսեցին տալ նրան ավելի դժվարին ու բարդ հանձնարարություններ։ Նոր, դուրեկան միջավայրում տանելով գրավիչ աշխատանքներ, կամոն ազատվում ե ընտանեկան դժբախտության հասցրած ընկճող տրամադրություններից, կերպարանափոխվում ե, դառնում կենսուրախ։ Մի անգամ ինչ վոր հանձնարարություն կատարելու առթիվ կամոն հարց ե տալիս։

— Կամ օտհո՞ւ? (կամո ատնեստի, փոխանակ ասելու հոմանականությունը—կամու ատնեստի—Ռում տանել)։

— Եւդու կամո, կամո, ծիծաղեց Ստալինը։ Յեվայդ որվանից նրա անունը մնաց ԿԱՄՈ։ Հետագայում նրա հետ աշխատող շատ ընկերները կովկասում, Պիտերում (Պետերբուրգ) և արտասահմանում նրան ճանաչում ելին միայն այդ անունով։ Անվանափոխության այս փաստը պատկերացնում է կամոյի վողջ ելությունը։ Թողնելով իր հայկական ազգանունը նա հրաժարվում եր պատկանել վորեւ ազգի։ հրաժարվելով իր անունից,—նա խղում եր իր կապերը իր հարազատ ընտանիքի հետ։ Այսուհետեւ նրա համար ընտանիքը դարձավ հեղափոխության մարտիկների շրջանը։ Նա դարձավ ընկ՝ կամո—անդամ միջազգային մեծ կուսակցության այն դասակարգի, վոր տանջված մարդկությանը առաջնորդում ե ավետյաց յերկիրը։ Յերբ նրան նախատում ելին, վոր նա իրը թե անտարբեր ե դեպի իր մորաքըրոջ և քույրերի նյութական ծանրը վիճակը, նա պատասխանում եր.

— Քաղցը փողոց ե նետում տասնյակ հազարավոր պրոլետար աղջիկներ... իմ քույրերը ի՞նչով են

նրանցից լավ: Պետք է կործանել այս անիծյալ իրավակարգերը: Յեվ համառորեն ու անդուր կերպով նա ձգտում եր այս նպատակին:

1903 թ. նա սկսեց աշխատել Ռ. Ս. Դ. Բ. Կ. Կովկասան Միացյալ Կոմիտեյում: Նա այս շրջանում յեղավ փոխադրող, կազմակերպեց ու կառավարեց Միացյալ Կոմիտեի տպարանը և ջերմ մասնակցություն ցուց տվեց կուսակցության յերկրորդ համագումարին պատգամավորներ ուղարկելու գործում: Անսպառ եր նրա հնարագիտությունը շպիկներին (լրտեսներին) և վոստիկաններին մոլորեցնելու մեջ: Ահա կինտոն վագում ե փողոցով: Նա գլխին դրած տանում ե բանջարեղենով լի թարաղ: Արագ-արագ բազուկները շարժելով ճեղքում—անցնում ե հարավային խայտարղետ աղմկող ամբոխի միջով: Չորս կողմից լսվում են կատակներ ու սրախոսություններ. խոսքի տակ չի մնում նաև մեր կինտոն: Անխոռվ ու հանգիստ անցնում ե պահակների մոտից, ինչպես և գործին անտեղյակ լրտեսների կողքից: Այս կերպ եր ընկ. կամոն փոխադրում գրականություն և տառեր:

Ահա յերկրորդ կարգի վագոնն ե մտնում նոր ու կոկիկ համազգեստ հագին մի տեխնոլոգ-ուսանող: Ըստ ամենայնի մայրական գուրգուրանքը վայելած մի տղա: Որիորդներն ու տիկնայք բարյացակամ դիտում են համակրելի ուղեկցին և քաշվում՝ տեղ են բաց անում նրա համար: Քաղցր զրուցով ժամանակ են անցկացնում: Հասնում են տեղ: Մեր հերոսը (չե՞ վոր այդ կամոն եր) վերցնում ե իր տեսքին համապատասխան շքեղ պայուսակ և ժանդարմների քթի տակով անց ե կացնում իր բեռք:

Նա այնքան եր վարժվել գրիմ անել, վոր ծանոթները հանդիպելիս չելին ճանաչում նրան։ Մի տոն որ, ամառը, իրիկնապահին, յերբ մարդաշատ գընացքը դեպի քաղաք եր սլանում, խեղճ ու կեղտոտ հազնված մի գյուղացի ներս ե խծկվում յերկրորդ կարգի վագոն, ձվով լի զամբյուղը ձեռքին։ Կանաչը սարսափում են՝

— Թի՛ր, Ի՞նչ կեղտոտ գյուղացի յե... ինչպես ե համարձակվում նա խծկվել այստեղ, — վագոնավար, (կոնդուկտոր) հեռացրեք սրան...

— Ի սեր աստծու, ուր ես հեռացնում խեղճիս։ Յերրորդ կարգի վագոնում այնպիսի խոնվածություն ե, վոր ձվանները կջարդվեն, ինչով պիտի առևտուր անեմ։

Բարի վագոնավարը յերկար բանակցություններից հետո թույլ ե տալիս թանկագին զամբյուղը դնել վագոնի հաշտում, և կամոն (չե՞ վոր ելի նա յեր) անճանաչ մնալով իր հետ միասին նույն վագոնով ուղեվորվող և նրա մոտով անցնող ծանոթներից, անվաստեղ ե հասցնում «ձվանները»։

Նա մասնակցեց Հավլաբարի տպարանի կաղմակերպման գործին։ Քաղաքի պրոլետարական մասում կամոն գտավ մի խղճուկ տնակ, վորի բակում կար մի ծածկ (սարայ), շինված ջրհորի վրա։ Այս տնակում բնակություն ե հաստատում «լվացարարուհին» (հարգված և նվիրված հեղափոխական Բարեն)։ Նա սպիտակեղեն ե վերցնում, լվանում և վատ յեղանակներին սարայում չորացնում։ Մինչդեռ գիշերները ջրհորի պատի մեջ մի քանի արշին խորության վրա անցք ե բացվում, վոր տանում ե տպարանից համար հատ-



Ըսկ. Կամոն կինառի հազարամ

կացված սենյակը. և թեև անցքը փորելը, փորված հողը հեռացնելը, ողանցք բաց անելը և կամարների տակ հենարաններ կառուցելը դժվարին և վտանգավոր գործեր եյին, — սակայն զետեղարանը պատրաստվում է: Վոչ պակաս զլխացավանք եր «արտադրության գործիքների» սարքելը: Հաղթահարվեց այս դժվարությունն ևս, և դազգյանը սկսեց գործել: Իսկ «լվացարարուհին» իր հերթին մեծ աշխատունակություն եցուցահանում և «սպիտակեղենով» զամբյուղները հաճախ ուղարկվում են նրա բակը և դուրս բերվում այնտեղից: Նա ուրախ և դյուրահաղորդ եր և նրա շուրջն եր խոնվում յերիտասարդությունը, գտնելով նրա բակը շատ հարմար գնդակախաղի համար:

Սրանից առաջ կամոն կազմակերպել և սարքել եր մի տպարան ևս: Այդ շրջանում կուսակցության միջոցները շատ սուղ եյին, իսկ դրամի մեծ կարիք կար. և ահա կամոն առաջարկում ե տպարանը, գեթմասամբ դնել առետրական հիմունքների վրա՝ վորոշագիտացիոն գրականությունից տպագրության վարձվերցնելով: Թեև մյուս ընկերները դեմ եյին նրա այս ծրագրին, սակայն ի նկատի ունենալով նյութական ծանր վիճակը, ստիպված յեղան համաձայնել: Այսպիսով «Ճեռնարկությունը» ծածկում եր իր ծախսերը և նույն իսկ հայթայթվում եր ստորերկրյա կամավոր կալանավորների սննդադրամը<sup>3</sup>):

1903 թ. վերջին կամոյին փորձանք պատահեց: Նոյեմբերի 27-ին Բաթումի վազզալում նա Ճերքակալվեց գրականությամբ լի պայուսակով միասին: Թեև նա կարողացավ վոչնչացնել իրեն վարկաբեկող փաստաթղթերը, և վերջնականապես չեր ել հուսահատված,



Հերթական պյուղակ հազուսակ

վոր պայուսակը նրան եր պատկանում, — կամոյին սակայն բանտարկեցին։ Նրա ընկերներից մեկը, վորի հետ կամոն բանդից կապ եր հաստատել, շտապ մեկնեց Գորի, նախազգուշացնելու մորը անկոչ հյուրերի յերեալու դեպքում հանկարծակիի չգալու համար (կամոն ցուցմունք եր տվել, վոր հոր միջոցներով Բաթում եր գնում մի առժամանակ մնալու համար)։ Բայց յերբ իրոք վոստիկանները յերեացին նրա հայրական տանը, կոշտ հայրն ասաց.

— «Ամենեկին չգիտեմ վորտեղ ե քարշ գալիս այդ դատարկապորտը և թե ինչ միջոցներով ե ապրում»։

1904 թ. սկզբներին Բաթումի բանդը լուր հասավ կուսակցության պառակտման մասին, և այդ որվանից կամոն վորոշակի կերպով դարձավ բայլշեկի։ Այլ կերպ չեր ել կարող լինել. նա դեմ եր ամեն մի կիսատ գործի և համաձայնականության։ Նրա պարտվողական հայացքները դուր չելին գալիս շատերին (ոռւս-յապոնական շրջանն եր)։

9-ամիս բանտում մնալուց հետո կամոն փախավ։ Այդ կատավեց այսպես։ Բանտի պարիսպը 5 արշին բարձրություն ուներ. մի տեղ պարսպի վրա կամոն նկատեց մի ցցվածք, վորը կարող եր նա ոգտագործել. Յեվ ահա մի անգամ, ոգտվելով հարմար ըռպելից, յերբ պահակ հեռացել և յերեսով մյուս կողմն եր դարձել՝ կամոն վազ տվեց, կատվի նման ցատկեց ցցվածքի վրա, ձեռքերի վրա բարձրացավ պարսպի գլուխը և թուավ մյուս կողմը. մի քանի ըռպելից նրա բացակալությունը նկատվեց. և վորովհետեւ պարսպի վրայով ցատկել-փախչելն այն աստիճանի անհավանական եր թվում, վոր վոչ վոք չփորձեց նրան փնտրել պա-

բըսպից դուրս, և մինչ նրանք ծանր ու բարակ փընտրում ելին նրան բակի ու շենքի քունջ ու պուջաղներում, նա վաղուց անհետացել եր:

### 3. ԿԱՄՈՆ – ՄԱՐՏԻԿ

Կամոն փախստից հետո ապրում ե անլեզակ և վորպես բայլշենիկ աշխատում ե Ռ. Դ. Դ. Բ. Կ.-ի Կովկասյան Միացյալ Կոմիտեում. (Կավказский Союзный Комитет Р. С.—Д. Р. П.) 1905 թ. դեկտեմբերի սկզբներին մենշևիկյան հեղտիվոխական շտաբը կոռպտացիալի կարգով, միասին յելույթ կազմակերպելու համար, հրավիրում ե յերեք բայլշենիկ. այս յերեքից մեկը կամոն եր: Սրանից վոչ շատ առաջ վոստիկանության սարքած ջարդերի ալիքն այնչափ տարածվել եր, վորանհանգստացած իշխանությունը «յերջանիկ» միտք ե հղանում դինել բանվորության և նրա միջոցով կասեցնել ջարդերը. հիրավի ջարդերին այսպիսով հաջողվեց վերջ տալ, սակայն բանվորները զանազան պատրվակներով ձգձգում եյին զենքերի հանձնումը: 4)

Ցարական կառավարության բռնություններին ի պատասխան դեկտեմբեր 18-ին բռնկեց ապստամբություն, վորի բռնը Թիֆլիսի բանվորական արվածան նախալովկան եր: Շտաբը ուժերը բաշխելիս ի նկատի յեր ունեցել հարձակում յերեք կողմից, իսկ չորրորդ՝ լեռնային կողմից վտանգ չեր սպասվում: Կամոն հուզվում, ապացուցանում եր այս լավատեսության անհիմն լինելը և վերջապես ինքնագլուխ, մի քանի բանվորների հետ բարձրանում ե սարը: Այս կողմից և յերևացին կազակները խիզախ մարտիկները կատաղորեն դիմաղրիցին. և այս փոքրիկ ջոկատից ինը հո-

դի սրախողխող յեղան, իսկ ինքը՝ կամոն վիրավորվեց և ձերբակալվեց։ Ութ կազակ յերեք ժամ շարունակ ամեն կերպ տանջում, ծեծում ելին նրան հրացանի կոթերով, յերկու անգամ ել կախում են,<sup>5)</sup> զուր տըքնելով իմանալու զենքի պահեստների տեղը և շտարի անդամների ազգանունները։ Կազակներից մեկը կամեցավ նրա քիթը կտրել, և կամոն վոր մինչ այդ կախվելու տանջանքը անտրտունջ տանում եր,—այստեղ դառնաղին լաց յեղավ. նա պատմում եր. «ինձ խորին հուսահատության մեջ եր զցում այն միտքը, վոր այդ նշանն ունենալուց հետո ընդ միշտ զրկվելու յեմզադունի աշխատանք կատարելու հնարավորությունից»։ Սակայն այս տանջանքներից վոչ մի արդյունք չստանալով, նրա վոչ քիթը կտրեցին, և վոչ ել կախեցին, այլ տարան բանտը։ Յելք նրան զբեթե մերկ և արհաթաթախ անց ելին կացնում թիֆլիսի փողոցներով, այս տեսարանից ցնցված անցնորդները կանգ ելին առնում և կամոյին ուղղեկցողների հասցելին զայրութիւ ու ատելության բացականչություններ ելին ուղղում։

Այդ որերը քաղաքի բանտերը լեփ լեցուն ելին։ Քաղաքի բոլոր ծալրերում անխաիր ամեն պատահողի ձերբակալելով՝ բանտերում ժողովրդի հոծ բազմություն եր կուտակվել, այնպիս վոր բնիկ կովկասցիների անուն ազգանունների անվերջ ցուցակները ոռու աղմինիստրացիալի մի մասի համար դարձել ելին անընթեռնելի գրություններ։

Կամոն արդեն ուներ հեղափոխական գործունեցության պատկառելի անցյալ. նրա Բաթումի բանտից փախչելը, մանավանդ այս վերջին դեպքը՝ նրա մասնակցությունը զինված ապստամբության, — նրա հա-

մար վոչ մի լավ բան չելին գուշակում։ Անմիջապես վորոշվում ե ողտադործել իրերի շփոթ վիճակը, և անունների փոխանակություն կատարել վոստիկանության յեռանդի պատահական զոհերից մեկի հետ (կարծեմ ֆելդերական աշակերտ Շանշիաշվիլին եր)։ Հարցաքննության ժամանակ Շանշիաշվիլին իրան պահում եր այնպես, ինչպես վայել եր իսկական համույն, և ցուցմունք տալուց հրաժարվեց, իսկ կեղծ Շանշիաշվիլին իրեն ներկայացրեց շատախոս և թեթևամիտ մի տղա։ Իրան տրված հարցին գիտե արդյոք կամույն—նա կուշտ ուրախ ծիծաղեց և ասաց.

—Իհարկե գիտեմ, հիմար հո չեմ, վոր չզիտենամ.

—Վորտեղ եք դուք նրան տեսել…

Ինչպես ի՞ն վորտեղ… դաշտում ինչքան ուզես— (կամո վրացերեն լեզվով դաշտային մի բուլսի անուն ե)։

Յերբ պարզվեց, վոր Շանշիաշվիլին բոլորովին անվտանգ մի քաղքենի յե, նրան արձակեցին։ Յեզ կամոն  $2\frac{1}{2}$  ամիս բանտում մնալուց հետո Շանշիաշվիլի անունով դուրս ե բերվում բանտից և վոստիկանի ուղեկցությամբ տարվում ե այն քաղաքամասը, վորտեղ ընակվում եր իսկական Շանշիաշվիլին։ Ներկայանալ այդ քաղաքամասը՝ նշանակում եր յենթարկվել վտանգի, քանի վոր այնտեղ կարող ելին կեղծիքը բացանել ուստի և պետք եր խուսափել այդ բանից։ Նըստում են կառք։ Ճանապարհին ըստ ամենայնի անմեղ և կարգին այս յերիտասարդը սկսում է խնդրել պահակից չվարկարեկել իրան՝ պատվելի քաղաքացիների առաջ՝ վոստիկանի հետ կառքով անցնելով։ Վորովհետեւ, հիրավի, կարող են կարծել վոր ինք, Շանշիաշ-

վիլին, քաղաքական հանցավոր կամ ջիրպիր եւ Այս խոսքերին հաջորդեց դրամական վարձատրություն։ Յեզ ահա վոստիկանը կառապանին խիստ հրահանգ տվեց՝ առանց կանգ առնելու ուղիղ գնալ այս ինչ քաղաքամասը, իսկ ինքը ցած եւ իջնում կառքից։ Կառապանը յերիտասարդի հետ շարժվում եւ առաջ, սակայն քաղաքամաս հասնում եւ մենակ, և շվարած չի կարողանում վորոշել, թե ի՞նչպես և վորտեղ կորցրեց յերիտասարդին։ Անհասկանալի և ճարպիկ փախուստը մի մարդու, վորին բացարձակապես վոչ մի վտանգ չեր ըսպառնում, քաղաքամասում իրարանցում զցեց։ Տեղեկացրին բանտ։ Պետք եւ յերեակաչել իշխանության կատաղությունն ու զայրութը, յիրք բացվեց իրանց ճակատագրական սխալը։

Նորից ընդհատակյա աշխատանքի անցնելով, կամոն ստիպված եր դիմել խիստ նախաղգուշական միջոցների։ Չորս կողմը վխտում եյին խուզարկուներ։ Կամոյի «կերպարանափոխվելու» ընդունակությունը այստեղ նրան մեծ ծառալություն մատուցեց։ Յերբեմն նաև նեմքն ու կերպարանքը այնպես եր սարքում, վոր ընկերները մնում եին շվար։ Հաճախ նա շատ ճարպիկ կերպով մոլորեցնում եր իրան հետապնդող լրտեսին, և կամ վորեե տրյուկով նրան թողնում եր ապուշ կըտրած։

Կամոն յերբեք չեր կորցնում իրան, և նրա հանդուգն քայլերը հաճախ փրկում եյին նրան անելանելի դրությունից։ Այսպես մի անգամ, առանց իր արտաքինը փոխեելու նա թատրոն եր դնում։ Միջանցքում

հանդիպում եր բանտապետին, վոր և ճանաչում ենը-  
րան, կամոն իր գեղեցիկ մանկական ժալիտն յերեսին,  
համարձակ մոտենում են նրան և ասում. «այո, այդ  
հենց յես եմ»։ Մի պահ այս յերկուսը լուռ նայում են  
միմյանց աչքերին, ապա բանտապետը կեղծ բարկու-  
թյամբ շշնջում եր «կորիր այս ըոպելիս, թե չե կձեր-  
բակալեմ»։

Նա ուղղակի շան կյանք եր վարում։ Հաճախ նա  
գիշերում եր բաց յերկնքի տակ, յերբորդ կտրգի վա-  
գոնի նստարանի տակ, զանազան դարշելի ոթեվաննե-  
րում. սոված եր մնում, զաղտնի հանդիպման սպասե-  
լիս, նա տանջալից ժամեր եր անցկացնում հայոց յե-  
կեղեցու մի մութ անկյունում՝ իրը թե խորասուզված  
աղոթքների մեջ։ Նա խոր քնելու սովորությունը վա-  
ղուց եր մոռացել, և քնած ժամանակ այնպիսի դիրք  
եր ընդունում, կարծես այն նպատակով, վոր աննշան  
աղմուկ բարձրանալու դեպքում վեր կենա ու փախչի։

Այդ շրջանում նա հաջողությամբ զբաղվում եր  
զենքեր փոխադրելով և փախուսաներ կազմակերպե-  
լով։ Ի միջի այլոց շատ փառահեղ կերպով ծրագրված  
և ի կատար եր ածված 32 ընկերների փախուսությունը։  
Ահա դեպքը։ Մետեխի բերդը (վրաց թագավորների  
ձեռքով կառուցված հինավուրց բերդ ե) գտնվում ե  
կուր գետի բարձր ափին. գետը կիսառղակաձև յեր-  
կու կողմից վողողում երերդը, յերբորդ կողմից փողոց  
ե անցնում, իսկ չորրորդ կողմից բերդը միանում ե  
քաղաքի տներին։ Այս տների մեջի միջից մի անցք  
փորվեց և մի ուշ գիշեր 32 ընկերները այդ անցքով  
հաջողությամբ փախան բանտից։

1916 թ. ամբան կամոն առաջին անգամ ուղե-

վորվեց Պիտեր, ուր նա ցանկանում եր տեսական պատրաստություն ձեռք բերել, վորի բացը նկատելի լեր Բայց վորտեղից: Ընթացիկ մարտական աշխատանքները նրան հրամայողաբար հետ ելին կանչում: 1906 թ. սեպտեմբերին Բաթումում կայացած Կովկասյան շրջանային կազմակերպությունների կոնֆերանսում, հակառակ մենշևիկների բողոքին, Կվիրիլիի դրամները (Կամոյի մասնակցությամբ մի խումբ բայլենիկների ձեռքով շորթված Կվիրիլի քաղաքում) հանձնվել ելին այն հանձնաժողովին, վոր պետք ե զենքի գնումներ կատարեր արտասահմանում: Այս հանձնաժողովի մեջ մտնում եր և Կամոն: Այս զենքը տեղ պիտի հասներ հատկապես այդ նպատակով Ռումինիայում գնված «Զարյա» շեզենավով: Շոզենավ գնելու գործը շատ ձգձգվեց, և մինչև Ռումինիայից տեղեկություններ կստացվելին, Կամոն ընտրվեց վորպես կազմակերպիչ մարտական խմբերի և զանազան տեխնիքական աշխատանքների՝ կենտրոնական արդյունաբերական շրջանում:

Միշտ զգալով իր կրթության պակասը և, ջերս ցանկանալով ձեռք բերել այդպիսին, նա հրաժարվեց արտասահման գնալ, և միսիայն վաղիմիր Իլիչին յերկար հորդորներից հետո հաջողվեց համոզել նրան գնալ Բուլղարիա: Այս ուղենորությունը տեսեց 2 ամիւ. բայց դժբախտաբար գնված շոզենավը հին և անպետք դուրս յեկավ, և բացի այդ, տարվա այդ յեղանակին (նոյեմբերի վերջը) Սև ծովում ուժեղ փոթորիկներ են լինում, ուստի և նավարկությունը վտանգավոր եր: Ռումինիայի սփերին նավը սկսեց խորասուզվել. նավի աշխատակիցները հազիվ ազատվեցին ոգնություն յեկող նավերով:



ընկ. Կամոն  
1919 թ. Թիֆլիսում հանված լուսանկարից

Այս անհաջողությունից հետո, կամոն հուսահատ վիճակում անլեզար կերպով, մեծ արկածներով անցկացավ Ռումինական սահմանը, (ճամբորդները կորցրին ճանապարհը և քիչ եր մնում ընկնեյին ոռոժանդարմների ձեռքը) և 1906 թ. դեկտեմբերին նանորից յերևաց կովկասում:

Սկսվող բեակցիայի այս շրջանում ընկերներից շատերը թողին կուսակցական աշխատանքը և տարվեցին քաղքենի կյանքով. ընկերներից վոմանք ել մինչ հեղափոխական տիպի ընդհատակյա աշխատանքի անլեզար կազմակերպությունների մեջ. և վերջապես ամենաանհնազանդներն ու տաքարյունները, վորոնք այնքան ել սովոր չեյին մտքի դիսցիպլինային, հեռացան անտառները, կազմակերպեցին «անտառային յեղբայրության» նման ընկերակցություններ։ Այս ընկերակցությունները չունենալով գաղափարով ու տեսականորեն պատրաստված դեկավարներ այլասեռվեցին և դարձան բանդիտական կազմակերպություններ։ Կամոն կարողացավ կապ ստեղծել սրանցից լավագույնների հետ, նրանց «խավարից լույս» դուրս հանել, համախմբել յուր շուրջը և կազմակերպել իսկական հեղափոխական հոգով շաղախված և հրաշալի կարդապահ մարտօնկան խմբեր։

1907 թ. Քութայիսի հաջողությամբ պսակված դրամաշորթությունը (եքսպրոպրիացիա) կուսակցության դրամարկղը բերեց կամոյի նշանակած ժամանակին տասնհինգ հազար ըուբլի վոսկով, վոստիկանությունը կաշվից դուրս եր գալիս նրան ըոնելու համար. բայց «կովկասյան ավազակը», ինչպես նըրան կատակով անվանում եր իլիչը, ձեռք չեր ընկնում։

Այդ շրջանում կամոյին ճանաչող բոլոր ընկերները հիշելով այս դեպքը, իրենց զարմանքն են հայտնում դեպի կուսակցության դրամները կամոյի ցուց տված հոգատար ու խնամոտ վերաբերմունքի համար: Թեև իր ձեռքում խոշոր դրամներ չեն գտնվում, նայերեք իր անձնական կարիքների համար որեկան 50 կոպեկից ավել չեր ծախսում, և իր մարտիկներին ել տալիս եր նույն չափ:

#### 4. ԹԻՖԼԻՍԻ ԵՔՍՈՐՈՊՐԻԱՑԻԱՆ

Քութայիսի հաջողություններից թե առած խըմբակը վորոշում ե ընդարձակել իր աշխատանքը. բայց խոսքից գործի անցնելն այնքան ել հեշտ բան չե: Ընկերները հաց ու լորի անգամ ամեն որ չելին ճարում: Զունեյին վերջապես վստահելի գաղտնի բնակարան: Ահա այստեղ յերեան յեկավ կամոյի կազմակերպչական տաղանդը: Նա վորոշում ե գնալ ֆինլանդիա զենք բերելու. իսկ գաղտնի աշխատակիցների համար նա ընտրում Միքայելան փողոցում արիստոկրատական մի բնակարան, ուր իշխանական կեղծ անուններով կեղծ բնակություն են հաստատում Բաչուա կուպրիաշվիլին և Վանո Կալանտաձեն:

Իսկ կամոն ձեռք բերելով **տիրակալ** (владетельный) իշխան Դադիանու անունով անցագիր՝ պարաստություն ե տեսնում մեկնելու: Անցագիրն իսկական եր, տիրակալ իշխան Դադիանու սնցագիրը, վորագատամիտ կալվածատերը կամավոր կերպով եր տվել: Դադիանին, ինչպիս և տիրող դասակարգի շատ ներկայացուցիչներ, այն ժամանակ, չեյին կարող կարծել, վոր կամոն և ամբողջ բանվորական կուսակցությունը

իր անհաշտ դասակարգային թշնամին եւ Մեկնելուց  
առաջ կամոն կազակ սպայի չերկեղկա հազին ներկա-  
յանում եւ իր ընկերներին: Տանտիրուհին, վոր լսել  
եր Դադիանի անվան տոհմի մասին, նրան դիմավորեց  
հարգանքով և հանդիսավոր կերպով ճանապարհ դրեց  
նրան: Արանով զգալի չափով ապահովվում եր բնա-  
կարանը՝ ամեն տեսակ կասկածներից: Սպայի կերպա-  
րանքով կամոն գնաց Ֆինլանդիա, յեղավ Լենինի  
մոտ, և զենք ու պայթուցիկ նյութեր վերցնելով՝ վե-  
րադարձավ Թիֆլիս:

Խումբը յերկար ժամանակ քննում եր այն հարցը,  
թե ինչպես կազմակերպեն մի խոշոր եքսպրոպրիացիա:  
Յեթե վորեւ հիմնարկում պահվում եյին ել խոշոր  
գումարներ, ապա այդպիսի գումարները բարդ և խիստ  
պահպանության տակ եյին գտնվում: Եքսպրոպրիա-  
ցիայի ծրագիրը սանրանասն մշակելիս պարզվեց  
կամոյի, ինչպես և բոլոր ընկերների համար, վոր  
եքսպրոպրիացիան պետք եւ կատարել դրամ փոխադրե-  
լու ժամանակ: Մնում ե վճռել վրատեղ և յԵՐԲ կատա-  
տառել գործողությունը: Կամոյի յեռանդի շնորհիվ  
խումբը շուտով սկսեց պարբերաբար տեղեկություն-  
ներ ստանալ, թե վրատեղ ինչպա՞ն գումար եր պահ-  
վում, վրատեղից և ուր ինչպիսի գումարներ են տեղա-  
փոխվում: Շուտով ճշտվեց, վոր յերեք ուղղությամբ  
են խոշոր դրամներ շարժման մեջ լինում, դեպի Զուլ-Փա (ոռւսական գրավող զորամասերի Պարկաստանում  
գտնվելու առթիվ), դեպի Բաթում (Զիաթուրի հանքե-  
րի համար և այլն) և Թիֆլիսում՝ փոստից՝ պետական  
բանկ: Զեռնարկվեցին իրար հաջորդող յերեք փորձեր:  
Հենց առաջին փորձն անհաջող անցավ, վորովհետեւ  
պայթած ոռւմբից կամոն ծանր կերպով վիրավորվեց:

Այս դեպքը հաջողվեց վոստիկանությունից ծածկել, և կամոյին բարյացակամ տրամադրված մի բըժիշկ նրան ուրիշի ազգանունով տեղափոխեց մի մասնավոր հիվանդանոցում։ Նրա ձախ դաստակն ու բաղկի փափուկ մասերը պատռվածքներ եյին ստացել, իսկ մարմինը՝ սաստիկ այրվածքներ, վորոնց հետեւանքով ստամոքսի պատերը խոցութիւն եյին և քիչ երմնում մահ պատճառելին նրան։ Ռումբի կտորտանքը խիստ մնասել եյին նրա ձախ աչքը, այնպես վոր յերկյուղ եյին կրում աջ աչքի տեսողության համար։ Սակայն նրա անսովոր առողջ կազմվածքը փրկեց նըրան։ Արյան վթիսումներն ու անտանելի ցավերն սկսեցին մեղմանալ։ Մի քանի շաբաթից նա վեր կացավ։ Նրա աջ աչքը չմնասվեց։ իսկ ձախը՝ տեսողության հազիվ մի տասերորդն եր պահել։ Վոտների վրա հազիվ եր ման գալիս, նա նորից անցավ աշխատանքի։

Յերկրորդ փորձը հաջող եր սկսված։ Խարտիկները դրամ տանող գնացքով ուղևորվեցին։ բայց ամենավերջին պահուն ստիպված յեղան յետ կենալ իրենց մտքից, վորովհետեւ այն ուղեցույցները (վալադ), վորոնք հարձակումից հետո մեր ընկերներին պետք ե առաջնորդիյին իրենց միայն հայտնի լեռնային կածաններով, վախեցնել ու փախել եյին։ Ընկերները խոսապես վշտացած թիֆլիս վերադարձան։ Այս ձեռնարկության վրա ծախսվել եյին բոլոր պայմուցիկ նյութերն ու դրամները։ Մինչդեռ ռումբերը պիտանի կառող եյին լինել միայն յերկու-յերեք որ ևս, վորից հետո խոնավանալով, անշուշտ բոլորովին կանապետքաւային։ Հարցը դրված եր այսպես։ կամ ռումբերն ամո—2

անմիջապես պիտի ողտազործվելին, կամ յերկար ժամանակով պետք եր հրաժարվել զործնական քայլերից: Բարեբախտաբար, խմբի վերադառնալու յերեկոյան լուր ստացվեց, վոր փոստը մյուս որը պետական բանկի փոխադրելու յերկու հարյուր հիսուն հազար ըուբլի: Անմիջապես համապատասխան վորոշում կայացվեց, վոր և այս անգամ պստկվեց հաջողությամբ: Մյուս որը, 1907 թ. հունիսի 23-ին, առավոտյան մոտավորապես ժամը 10-ին պետական բանկի գանձապահ կուրդյումովը և հաշվետար Գալամսյա փոստից ստանալով 250,000 ըուբլի, յերկու կառքով, «ւղեկցությամբ» յերկու պահակի և հինգ կողակների, ճանապարհ ընկան դեպի բանկ: Պուշկինյան այգու առաջ վորտեղից յերեսում եր փոստը, Պացիա Գոլդտվան պայմանական նշան տվեց պահեստի դարպասի առաջ կանգնած Ստեղկո Կիցկիրվելիին.

### — Շարժվեցին.

Ստեղկոն այս անմիջապես հաղորդեց Աննետա Սուլամիձելին, վորը նույն յեզանակով հայտնեց «Թիլ Պուճուր» ճաշարանում նստած մարտիկներին: Իր հերթին Բաչու Կուպրիաշվիլին բաց լրագիրը ձեռքին ըռլորեց Յերեանյան հրապարակը: Հրալարակի զոնազան մասերում կանգնած ընկերներ՝ Դաթիկի, Դիրիաշվիլի, Արկատիչ Երակիձելի, Վանո Շիմշանովի, Վանո Կալանդելի, Իլիկո Ճաճիաշվիլիի և Իլիկ Իբրիալիձելի համար այս բաց լրագիրը նշան եր պատրաստ լինելու հարձակման: Այս ընկերներից զատ Ակակի Դալաքիշվիլին և Թեոֆիլ Կավրիաշվիլին պատրաստ կանգնած ելին, վորպեսզի հարձակման ժամանակ վարչության առաջ կանգնած կողակներին պահեն: Վերջա-

պես Ելիսո Լոմինածեն և Սերապիոն Լոմիծեն Արմ-  
յանոկի բազար և Վելլամինովսկի փողոցների անկյու-  
նում կանգնած եյին պաշտպաննելու համար այն ճա-  
նապարհը, վորով եքսպրոպրիատորները պետք ե փախ-  
ցընեյին դրամը:

Զիավորներով շրջապատված, փոշու ամպերի մեջ  
կորած արագ շարժվում եյին կառքերը: Առջեկոց գնա-  
ցող կողակներն արդեն թեքվում եյին դեպի Սոլոլակի  
փողոցը, այդ բոպելին Դաթիկոն առաջ քայլեց: Զեռ-  
քի ուժեղ թափով բոլորը նետեցին իրենց ոռւմբերը:

Յերկու, և ապա նորից յերկու պայթյուններ:

Սալահատակի վրա մնացին յերկու վոստիկան և  
մի կողակ: Զիերն ուժգնորեն այս ու այն կողմ տա-  
րան պահակին:

Բայց դրամ բեռնած կառքը չպայթեց ոռւմբից և  
ձիերը նրան տարան դեպի Սալդուտոկի բազարը: Մի  
վճռական բոպե յեր այս և միտյն Բաչուան եր, վոր  
չկորցրեց իրան: Նա առաջ նետվեց ձիանների դեմն  
առնելու և կառքին հասավ հրապարակի ծայրին: Ա-  
ռանց վարանելու, առանց իր մասին հոգալու, նա  
ոռւմբը նետեց ձիանների վոտքերի տակ, և պայթյու-  
նի ուժից նա գետին գլորվեց: Այս անգամ ևս դրամը  
կարող եր խիզախ մարտիկների ձեռքից գնալ, սակայն  
ժամանակին վրա հասավ ձիաբրիշվիլին: Ուշադրու-  
թյուն չդարձնելով Բաչուայի վրա, նա կառքից թոցը-  
րեց դրամի պարկը և վազեց դեպի Վելլամինովսկի փո-  
ղոց:

Իսկ ուր եր այդ պահուն կամոն, գործի վոգին  
ու կազմակերպողը: Սպայական տարագ հագին, վի-  
րավորվելուց հետո դեռ վերջնականապես չապարին-

ված, գունատ, կամոն առավոտվանից ման են գալիս հրապարակում և վարպետորեն ու խորհրդավոր կերպով նկատողություններ անելով աշխատում եր ժողովուրդը հեռացնել հրապարակից, վորպեսզի խուսափի ավելորդ արյունահեղությունից (նրա սպայական տարագը փարատում եր ամեն կասկած): Յերբ ոռութերը պայթեցին՝ կամոն կտոքումն եր: Նա մարտիկներից ընդունելով դրամները, պիտի փոխադրեր ապահով վայր: Յերբ, նախապես մշակված ծրագրի համաձայն, կամոն Գանովսկի փողոցից դուրս յեկավ Յերեվանյան հրապարակ, նրան թվոց, վոր այս անգամ ևս ծրագիրը խորտակվել ե:

— Համենայն դեպս պետք ե ոգնել ընկերներին, քանի դեռ զորամասերը չեն մոտեցել, — այսպես մտածեց նա և կանգնելով կառքի մեջ, սկսեց ատրճանակ արձակել և չար կապիտանի նման կտտաղի հայնուանքներով ու աղմուկով նա կառքը քշեց դեպի Վելյամինովսկի փողոց: Այստեղ ահա նո պատահաբար դեմ յելավ Դաթիկոյին: Վերցնելով նրանից դրամը, կամոն փոխադրեց այն Միխա Բոչարինի ընակարանը և այնտեղից մի գահավորակի մեջ տեղավորելով՝ դրամները փոխադրվեցին մի բոլորովին ապահով տեղ՝ աստղադիտարանի վարիչի առանձնասենյակը:

Յերբ զորքերը ողակեցին հրապարակը, այնտեղ վոչ վոք չեր մնացել: Եքսպրոպրիացիայի բոլոր մասնակիցները բարեբախտաբար զեղծ մնացին ձերբակալումից: Արտասահմանում, զործին անուղղակի մի քանի աջակիցներ դրամ մանրացնելիս հայտնաբերվեցին, սակայն արտասահմանյան այդ պետությունները հրաժարվեցին նրանց հանձնել Առևտաստանին:

## 5. ԿԱՄՈՆ—ԽԵԼԱԳԱՐ Ե ԶԵՎԱՆՈՒՄ

1907 թ. ոգոստոսին կամոն ապահովագրական ընկերության գործակալ Միրսկու անցագրով ժամանում ե Բերլին և բնակություն ե հաստատում Ելզասերշտրասսեյում։ Սեպտեմբերի 11-ին գերմանական վոստիկանությունը նրան ձերբակալում ե։ Այս ձերբակալությունը կամոն համարում եր հետևանք Ժիտոմիրսկու պրովոկացիայի։ Թեև ձերբակալման առիթ կարող եր ծառայել ընկերներից մեկի անզգուշությունը, վորի մոտ գտնվել եր կամոյի հասցեն։ Խուզարկության ժամանակ կամոյի մոտ գտնվեցին մի արկղ զենք, մի պայուսակ պայթուցիկ նյութեր, ինչպես և խորհրդավոր կառուցվածք ունեցող մի մեքենա։ Նրան անմիջապես տարան «Ալտ Մոարիտ, կրիմինալ գերիխտ» քննական բաժանմունքը<sup>8)</sup>։

Հարցաքննությունը շատ դժվարանում եր, վորովհետեւ նա գերմաներեն չգիտեր. մինուն ժամանակ ձեւացնում եր, վոր սուսերեն ել շատ քիչ ե հասկանում։ Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամների միջնորդությամբ, կալանավորին այցելելու իրավունք տրվեց Ռուկար կոն փաստաբանին։ Ռւշագրավ ե, վոր այս յերկու մարդիկ, զրկված լինելով իրար հասկանալու հնարավորությունից, առաջին իսկ հանդիպման ժամանակ առաջակարտավորություն թողին միմյանց և առ տոկունություն կամոն կատարյալ ռեսավորն ե, նա ուներ յերպի կոնը, իսկ կոն՝ քաղաքական հակառակորդների վորական, յուրա եր անհաշտ, բուռն ատելությամբ, —

դեպ նա ցուցահանեց ջերմ կարեկցություն և հետաքրքրություն։ Նրանք դիմախաղերի և շարժումների միջոցով այնչափ կարողանում եյին միմյանց հասկանալ, վոր համարչա հնարավոր եր չդիմել թարգմանի ողնության, մանավանդ վոր զգուշության համար ցանկալի յեր վերջինից հեռու մնալ։ Կամոյի մոտ գտնված խորհրդավոր գործիքը դժոխային մեքենայի տեղ ընդունվեց, վորի հետևանքով կամոն մեղադրվեց վորպես աերրորիստանիշիանական։ Գործը լուրջ բնույթ եր ստանում։ Անցյալում յերկու անգամ արդեն կամոն բանտից փախել եր. բացի այդ, նրան վերագրում ելին այնպիսի արարքներ, վորոնց համար մահվան պատիժ և սահմանված։ Բերլինում կայանալիք դատավարությունը կարող եր վորոշել՝ հանձնել նրան ուսու կառավարության։

Նոյեմբերին տեղի ունեցած դատավարությունից 2—3 շաբաթ առաջ կամոն սկսեց կատաղի խելագար ձեւանալ (նա այս բանն արտավ լնկ. Կրասինի խորհուրդով, վորի յերկտողը այդ մասին կոչը մի կերպ հանձնեց նրան)։

Եսչպես հայտնի յե, սուտ հիվանդ ձեւանալը դըմվար գործ ե, իսկ հոգեկան հիվանդ ձեւանալն՝ առավել ես։ Հոգեկան հիվանդության բաղմազան ձեւը կան և ամեն մի ձեւ ունի իր ուրույն արտահայտությունները, կամ այդ արտահայտությունների այս կամ այն խըմվոչ վոք ու լակայն հաճախ հիվանդության կեղծանկիցները բարութաւ հում ձեւանալ կատաղի խելալումից։ Արտասահմանում, ուժերի չափազանց լանի աջակիցներ դրամ մանրացնել և հառով նրանք շուսակայն արտասահմանյան այդ պետք նրանք շուժարվեցին նրանց հանձնել Ռուսաստեի վիճակի չեն

լինում շարունակել կեղծել: Դատական բժշկականության պատմության մեջ հայտնի յեն դեպքեր, յերբ սուտ հիվանդ ձեանալ փորձել են բժշկական պատրաստություն ունեցող մարդիկ, բայց և այնպես չեն կարողացել գլուխ բերել այս դժվարին գործը, Խնդիրն այն է, վոր գժանոցի միջավայրը չափազանց ընկճող տպավորություն ե թողնում ներվային համակարգության վրա. իսկ կամքի և ուշադրության յերկարատե, զիշեր ու ցերեկ հոգնեցուցիչ լարումը—մարդուն շուտով-զրկում ե ինքն իրեն տիրելու կարողությունից: Այս կեղծարարությունը սովորաբար յերկու յելք ե ունենում. կամ խելագար ձեւացողն իրոք գժվում է, կամ թե չե՛ կամովին հրաժարվում ե այդ խաղից: Հազվագյուտ դեպքերում ամենահամառներն ու հետևողականները միայն կարողանում են մոլորեցնել բժիշկներին: Կեղծարարները վեց շաբաթ, կամ ամենաշատը՝ յերկու ամիս անց բռնվում են:

Այս բոլորից հետո պարզ է, վոր կամովի փոխարեն յեթե մի ուրիշը լեներ, մի քանի ժամից, առավելն մի քանի որից կրոնվեր: Սակայն կամոն հրաշք գործեց. նա ամբողջ չորս տարի հաջողությամբ սուտ հիվանդ ձեւացավ: Այս ապշեցուցիչ փաստը կարող եր տեղի ունենալ միմիայն շնորհիվ այն առանձնահատուկ գծերի, վոր ուներ կամոն: Նախ և առաջ կամոն գերազանցորեն ամրակազմ եր և ֆիզիքական հսկա ուժի տեր. յերկրորդ՝ նրա ներվային համակարգությունը բացառիկ ամրություն և տոկունություն ուներ. իսկ վոր ամենագլխավորն է, նա ուներ յերկաթե կամք և իր քաղաքական հակառակորդների հանդեպ լեցված եր անհաշտ, բուռն ատելությամբ,

մի ատելություն, վոր ներշնչում եր նրա հերոսական վճռականություն՝ տանել ամեն տեսակ տանջանքներ, միայն թե թշնամին չհաղթանակե:

Հանուն հեղափոխության կամոն հաճախ առիթ ե ունեցել զոհել իր անձը, բայց չորս յերկար տարիներ տևող այս ամոթալի ծամածոռությունները ծանր նվաստացումներ ելին նրա հպարտ հոգու համար:

Սուտ հիվանդ ձեանալու առաջին որը, յերբ կամոն սկսեց կատաղել, աղմկել, վրայի հագուստը պատառոտել, կերակրի ամանները գետին շպրտել և վերակացուներին ծեծել,—նրան փոխադրեցին նկուղ, զերոյից ցած ջերմաստիճան ունեցող մի սենյակ. այստեղ բոլորովին մերկ վիճակում պահեցին նրան ինն որ շարունակ: Վորպեսզի չմըսի ու չհիվանդանա, կամոն սոսիպված եր անընդհատ շարժման մեջ լինել, վազվզեց ցատկոտել: Ինն որ անց նրան յետ տարան և շուտով կամոյին այցելության յեկավ կոնը, վորին նա ճարպիկ և ուրիշներին աննկատելի կերպով հասկացըց, վոր ինքը առողջ է:

1907 թ. նոյեմբերին տեղի ունեցած դատավարության ժամանակ կամոն իրան պահում եր վորպես կատաղի խելազար, և դատարանը վորոշեց նրան փոխադրել բանտի հիվանդանոցի հոգեբանական բաժանմունքը ի քննություն. միաժամանակ վորոշվեց Ոսկար կոնի միջնորդության համաձայն իրան՝ կոնին, նշանակել հոգեկան հիվանդ կալանավորների խնամակալ: Այս քննությունը տեսեց վեց ամիս: Կամոն չորս ամիս շարունակ չեր պառկում, վոտի վրա անցկացնելով գիշեր ու ցերեկ. նա հանգստանում եր միայն յերեսը դեպի անկյունը դարձած՝ փոխ առ փոխ բարձրացնելով

մեկ այս, մեկ այն վոտը։ Կամոն հրաժարվեց ընդունել վորեե սնունդ։ այն ժամանակ նրան սկսեցին կերակրել ստամոքսի զոնդի (ձողիկ) միջոցով, ըստ վորում նրա ծնոտները բաց ելին անում բռնի կերպով, և այս դիմադրության ժամանակ ջարդվեցին նրա միքանի ատամները։ Հետագայում կամոն պատմում եր, վոր կաթի այս ռեժիմը (նրան կաթով ելին կերակրում) շատ ոգտակար եր իր համար։

Նրա հնարագիտության և իր վրա կատարած ոլինրազությունների չափու ու սահման չկար։ Այսպես ողինակ, նա մի անգամ պոկում ե իր գլխի մազերի կեսը և խուզած շինելով՝ սիմետրիկ կերպով դարսում ե իր վերմակի վրա։ Յերբ ներս մտնող բժիշկն ու վերակացուն տեսան այս պատկերը, սարսափած ձեռքերն իրար կցեցին ու բացականչնցին։ «Չըեկլիխ» (սարսափելի չե)։ Մի անգամ ել հույսը դրած բանտի վարչության աչալուրջ հսկողության վրա՝ կամոն կախվելու փորձ արեց և բարերախտաբար ժամանակին նրան հանեցին ողակից։ Մի որ ել իրեն տրված սուպի մեջ նա գտնում ե մի փոքրիկ վոսկոր։ սրելով այս վոսկորը, գիշերը կտրատում ե իր արյունատար անոթները։ Յերբ վրա հասած ոգնությամբ արյունահոսությունը դադարեցնում են և արյունաքամությունից մեռնողը ուշքի չե բերվում, նկատում են, վոր վոչ միայն սահճակալն, այլ և կամերայի առբողջ հատակը ծածկված ե արյունով։

Հավանորեն բժիշկները կասկածում ելին նրա իսկական հիվանդ լինելու մասին, քանի վոր նրանք վեց ամիս փորձեր ելին կատարում։ Բայց փորձերի յենթարկվողի՝ իր անձի վրա կատարած մի շարք տան-

ջալից արարքները նրանց այն համոզման բերին, վոր նորմալ մարդը ի վիճակի չի լինի տանել այդ բոլորը. ուստի գտնելով նրան հիվարդ՝ 1908 թ. մտյիսին փոխադրեցին հիվանդանոց (Բերլինի մոտ, Բուխ կոչված հիվանդանոցը հոգեկան հիվանդների համար), վորտեղ նա մնաց մինչև 1909 թ. մարտ ամիսը<sup>9</sup>): Կամոն շատ դառն հիշողություններ ուներ այս հիվանդանոցից: Այս շրջանում նրա կյանքի միակ պայծառ եջերը կոնի այցելություններն ելին, վոր տեղի ելին ունենում շաբաթը մեկ կամ յերկու անգամ: Կամոն այստեղ ևս պահում է իր ժշտական հումորը և առույգ տրամադրությունը:

Բուխում նրան տեղավորեցին մի սենյակում, վորտեղ գտնվում ելին տասը կատաղի խելագարներ: Հստ յերեսութին հսկողությունը հիվանդների վրա թույլ եր, քանի վոր նրանք միմյանց խեղղուում, ծեծում, չանկոտում ու կծոտում ելին: Այս հաճելի, սակայն վոչ անվտանգ ընկերակցության մեջ կամոն անցկացրեց մի քանի որ. հետո նրան փոխադրեցին ավելի հանգիստ բաժանմունք: Սակայն շատ ծանր փորձություն եր մնալը այս խելագուրկ արարածների մեջ, վոր յերբեմն վողորմելի յեն, յերբեմն զվարճալի, հաճախ ել զարհուրելի և միշտ պատրաստ անսպասելի, անախորժ արարքներ անելու: Փախչելու ե վոչ մի հընարավորություն: Ինչքան ել չափում-ձևում եր կամոն, վորքան ել կոնը աշխատում եր ոգնել նրան, սակայն յերկուսն ել տեսնում ելին, վոր յելք չկա: Այն ժամանակ կոնը սկսեց միջնորդություններ հարուցել կամոյին այլ հիմնարկություն փոխադրելու մասին, վորտեղից հեշտ կլիներ փախչելը. սակայն նա մերժում ստացավ:

Բուխում գտնվելու ժամանուկ կամոն դիտում և հետեւմ եր իրեն շրջապատող հիվանդներին։ Սրանց թվում կար մի մորֆինիստ բժիշկ, վորին ծնողները այդ հիվանդանոցում տեղավորել ելին այն պատճառով, վոր նա վոչ թե միայն իր, այլ և իր ձեռքն ընկած ոտարի կարողությունը ծախսում եր մորֆի ձեռք բերելու համար։ Այս բժիշկը ավելի գիտակից հիվանդների հետ հաճախ զրույց եր անում հոգեկան հիվանդությունների զանազան ձևերի մասին, նկարագրում դր նրանց նշաններն ու առանձնահատկությունները, կամոն աշխատում եր այս ամենը յուրացնել։

1909 թ. մարտ ամսին Բուխի վարչությունը հայտարարեց հոգեկան հիվանդ տերրորիստ-անարխիստ Պետրոսյանի վիճակը միանգամայն գոհացուցիչ, վոր նա խաղաղվել և կատարչաւ գիտակցության մեջ և, անգամ ի վիճակի յե կատարել ձեռքի և այգու աշխատանքներ։ Այս հայտարարության հետեանքով կամոյին նորից փոխադրեցին Ալտ Մոարիթ բանտի քննչական բաժանմունքը։ Այստեղ նա նորից «հիվանդացավ» և այս անգամ արդեն գիտության բոլոր որենքների համաձայն, և ապրիլի 16-ին նրան նորից տարան Բուխ։ Նա աշխատում եր նմանվել այն հիվանդներից մեկին, վոր տառապում եր մշտական պըսիսողով (հոգեախտություն) և կաշվի զգալունակության խանգարումով։ Անեստեզի անվամբ հայտնի այս հիվանդությունը արտահայտվում և նրանով, վոր մարմնի վորոշ մասերը անցավզգաց են։ Կամոն վարպետորեն, ամենայն ճշտությամբ կատարեց այդ հիվանդի բոլոր արարքները՝ դեմքի արտահայտությունը, քայլվածքը, շարժումները, զառանցանքը և այլն։

Ճարպիկ կեղծարարին մերկացնելը խիստ շահագրգռում եր բժիշկներին, ուստի նրանք կամոյին յենթարկեցին խիստ բարբարոս փորձերի. որինակ՝ յեղունդների տակը քորոց եյին խրում, մարմինը այրում ելին շիկացած մետաղի ծայրով և այլն: Կամոյի ձախ աղղը վըա յերկար տարիներ հետո դեռ կարելի յեր տեսնել շիկացած յերկաթի այրած խոր վերքերի մնացորդ սպիները: Կամոն բոլոր այս հաճախակի կրկնվող տանջանքները տանում եր գերազույն հանգստությամբ, առանց սարսուռ զզալու, առանց աչքը թարթելու. «այրված մսի վատ հոտ եր գալիս», պատմում եր նա: Յեվ վորովինետե բժիշկներն ու պրոֆեսորները, վոչ մասնագիտական գրականության մեջ, վոչ ել իրանց գործնական կյանքում չեյին պատահել նման դեպքի, վոր նորմալ զգայունակություն ունեցող մարդը ի վիճակի լիներ այդպիսի անգորրությամբ տանել նման տանջանքներ, ուստի չնայելով աչքերի բիբերի մատնության, նրանք կամա-ակամա յեկան այն յեզրակացության, վոր փորձության յենթական իրոք տառապում ե այն հիվանդությամբ, վոր նա ձեացնում եր (մարդկանց և կենդանիների աչքի բիբերը ցավի աղցեցությամբ լայնանում են, և այս յերեսույթը վոչ մի կերպ կամքի ուժով չի կարելի վերացնել):

Այդ ժամանակները, «Արմենդիբեկցիոնը» (մի հիմնարկ վորի իրավասությանն եյին յենթարկվում շրջանի հիվանդներն ու աղքատները) գերմանական վոստիկանության ճնշման տակ կամոյին ոռւս կառավարության հանձնելու պահանջ դրեց, պատճառաբանելով, վոր ոտարազդի հաշմանդամը չպիտի պահպի գերման ժողովրդի միջոցներով: Յեվ չնայելով Ռո-

կար Կոնի ձեռք առած բոլոր միջոցներին ու ճիղերին՝ կամոյին Ռուսաստանին չհանձնելու մասին, այնուամենայնիվ 1909 թ. հոկտեմբերի 4-ին Վերշեն-Ստրելկովո կայարանում կամոյին հանձնեցին ոռւս ժանդարմաներին, վորոնք և փոխադրեցին նրան Թիֆլիս, վորտեղ պիտի կայանար զինվորական դատը։ Թիֆլիսում նրան դրին Մետեխի բանտը։

Ռուս կառավարության՝ կամոյի վերաբերմամբ արագ ու վայրագ կամայական դատը կանխելու նպատակով Կոնը «Թորվերստ» թերթում լույս ընծայեց մի հոդված, վորին արձագանք տվեց գերմանական վողջազատամիտ մամուլը։ Իր հերթին Երվեն «Հյումանիտե»-ում խիստ հարձակողական հոդված տվեց գերմանական կառավարության դեմ, վորը հիվանդ մարդուն, վորպես քաղաքական հանցավորի, հանձնում ե հետադեմ Ռուսաստանին։ Այս խնդրի շուրջը բարձրացած մեծ աղմուկի հետևանքով ոռւս կառավարության համար անհարմար դարձավ կամոյի գլուխն ուտել, վորքան ել այդ իրան ցանկալի լինել։

## 6. ԿԱՄՈՅԻ ՓԱԽՈՒՍՏԸ ԹԻՖԼԻՍԻ ՀՍԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՑ

Կոնի ջանքերով Թիֆլիս ուղարկվեցին կամոյի քրոնիքական հոգեկան հիվանդության վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, վավերացրած Բերլինի ականավոր մասնագետների ստորագրությամբ։ անտեսել այս փաստաթղթերը, անշուշտ, չելին կարող Թիֆլիսի զինվորական դատարանի փորձագետ բժիշկները։


Դատի որը դատարանը և հարակից միջանցքնե-

Ա Ե Ւ - Լ Ե Ս Ո Ւ Ն Ե Յ Ի Ն Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Մ Բ Ո Ղ Ձ Թ Ի Գ -  
 Խ Ա Ր Ժ Մ Ա Ն Մ Ե Ջ Ե Ր . ա մ ե ն ք ը ց ա ն կ ա ն ո ւ մ Ե յ ի ն տ ե ս -  
 ն ե լ ա ն վ ա ն ի ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն ա յ ո հ ե ր ո ս ի ն , բ ա ն վ ո ր  
 դ ա ս ա կ ա ր գ ի մ ա ր տ ի կ ի ն : Բ ա յ ց ա վ ա շ ղ , ա յ ն տ ե ս ա ր ա ն ը ,  
 վ ո ր պ ա տ կ ե ր ա ց ա վ ն ր ա ն ց , հ ի ր ա վ ի շ ա տ վ ո ղ ր ա լ ի յ ե ր :  
 Հ ի վ ա ն դ ա ն ո ց ի պ ա տ ա ռ ո տ ա ծ շ ո ր ե ր հ ա զ ի ն , ն ի -  
 հ ա ր , վ ո չ վ ո ք ի ն չ ճ ա ն ա չ ո ղ յ ե ր ե ր ո ւ ն ա չ ք ե ր ո վ մ ա շ վ ո ւ ծ  
 դ ե մ ք ի ն , կ ա մ ո ն ա ն ս ա հ մ ա ն խ ղ ձ ա լ ի պ ա տ կ ե ր ո ւ ն ե ր :  
 Շ ա տ ե ր ը լ ա ց Ե յ ի ն լ ի ն ո ւ մ : Ն ր ա ն ն ե ր ս բ ե ր ի ն դ ա հ լ ի ճ  
 և մ ո տ ե ց ր ի ն ա յ ն ս ե ղ ա ն ի ն , վ ո ր ի շ ո ւ ր ջ ը ծ ա ն ր ա ր ա ր ո -  
 բ ա զ մ ե լ Ե յ ի ն դ ա տ ա վ ո ր ն ե ր ը : Վ ո չ վ ո ք ի վ ր ա ո ւ շ ա գ ր ո -  
 թ յ ո ւ ն չ դ ա ր ձ ն ե լ ո վ ն ա թ ե կ ի ց հ ա ն ե ց բ ա ն տ ի հ ի -  
 վ ա ն դ ա ն ո ց ո ւ մ ը ն տ ե լ ա ց ր ա ծ վ ա ս կ ա ա ն ո ւ ն ո վ ծ ի տ ը և  
 բ ա ց թ ո ղ ե ց ս ե ղ ա ն ի վ ր ա խ ա լ ո ւ . ա ռ ա ն ց պ ա տ ա ս -  
 խ ա ն տ ա լ ո ւ ի ր ա ն ո ւ ղ վ ա ծ հ ա ր ց ե ր ի ն , ն ա հ ա ց ի վ ը շ ը -  
 ր ա ն ք ն ե ր ո վ կ ե ր ա կ ը ր ո ւ մ ե ր թ ո չ ն ի կ ի ն , և ա պ ա բ ա ր ձ -  
 ր ա ց ն ե լ ո վ գ լ ո ւ խ ը՝ ա պ ո ւ շ ժ պ ի տ ը դ ե մ ք ի ն ը ո ւ ր լ ի կ ի մ ի  
 կ տ ո ր հ ր ա մ ց ր ե ց դ ա տ ա վ ո ր ն ե ր ի ց մ ե կ ի ն : Ն ե ր կ ա յ ե ղ ո ղ -  
 ն ե ր ի վ ր ա ա յ ս տ ե ս ա ր ա ն ը շ ա տ ծ ա ն ր տ պ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն  
 թ ո ղ ե ց : Ա յ դ պ ա հ ո ւ ն դ ա հ լ ի ճ ո ւ մ զ ա ն վ ո ղ ն ր ա լ ի զ ա  
 մ ո ր ա ք ո ւ յ ը ը և ի ր ք ո ւ յ ր ե ր ն ա ն ձ ա մ բ հ ա մ ո զ վ ե լ ո վ , վ ո ր  
 ի ր ե ն ց ս ի ր ե լ ի կ ա մ ո ն հ ի ր ա վ ի կ ո ր ց ր ե լ ե ր ա ն ա կ ա ն ո ւ -  
 թ յ ո ւ ն ը , խ ո ր ա պ ե ս ց ն ց վ ե ց ի ն , ս ա կ ա յ ն ա յ ս ս ա ր ս ա փ ե -  
 լ ի վ ի ճ ա կ ը գ ե ր ա դ ա ս ե լ ի Ե յ ի ն հ ա մ ա ր ո ւ մ , ք ա ն ն ր ա ն  
 ս պ ա ռ ն ա ց ո ղ մ ա հ վ ա ն պ ա տ ի ժ ը : Մ ե ղ ա դ ր յ ա լ ի ն դ ո ւ ր ս  
 տ ա ր ա ն դ ա հ լ ի ց : Զ ի ն վ ո ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ը ա ն հ ր ա -  
 ժ ե շ տ զ տ ա վ Մ ե տ ե խ ի բ ա ն տ ի հ ի վ ա ն դ ա ն ո ց ի հ ո գ ե ր ո ւ -  
 ժ ա կ ա ն բ ա ժ ա ն մ ո ւ ն ք ո ւ մ ն ո ր ք ն ն ո ւ թ յ ա ն յ ե ն թ ա ր կ ե լ  
 ն ր ա ն : Ա յ ս տ ե ղ ն ա մ ա ց մ ի տ ա ր ի ո ւ չ ո ր ս ա մ ի ս , և  
 ք ն ն ո ւ թ յ ո ւ ն ն ո ւ փ ո ր ձ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը տ ա ր վ ո ւ մ Ե յ ի ն մ ո -  
 տ ա վ ո ր ա պ ե ս Բ ե ր լ ի ն ի յ ե ղ ա ն ա կ ո վ :

Այս ժամկետից հետո, յերբ քժիշկներն ևս նրան  
անըռուժելի հիվանդ գտան, Կամոյին բարերախտաբար  
փոխաղբեցին Միքայելյան հիվանդանոցի համապա-  
տասխան բաժանմունքը։ Այստեղ նա ծրագրեց և ի  
կատար ածեց իր փախուստը։ Այս նպատակի համար  
նրան նախ և առաջ աջակից եր հարկավոր։ Յերկար  
մտածելուց հետո, Կամոն ընտրեց հիվանդանոցի յերի-  
տասարդ աշխատակիցներից մեկին, վորի միջոցով և  
կապ հաստատեց դրսի աշխարհի հետ։ Կամոն իրեն  
հատուկ ուղղամտությամբ և ազնվությամբ նախապես  
զգուշացրեց իվան Բրագինին (այսպես եր յերիտա-  
սարդի անունը), թե Կամոյին աջակից դառնալով ինչ-  
պիսի վտանգի յե յենթարկում նա իրան։ Գործը հա-  
ջող թե անհաջող յելք կընդունի, միևնույն ե, գաղտ-  
նի աշխատանքի մեջ անփորձ Բրագինին լավ բան չեր  
սովասում։ Կամոյի հմայիչ անձնավորությունը, ինչպես  
և նրա անվան հետ կապված հերոսական համբավը  
վերջնականապես վաճեցին նրա տատանումները։ Ան-  
հավանական ե թվում, վոր նրա այս վորոշման մեջ  
դեր խաղացած լինեն իր ստացած մի քանի հարյուր  
րուբլիները, քանի վոր Կամոյին մատնելով՝ նա, ան-  
շուշտ, կարող եր իր համար ավելի փայլուն ապագա  
ստեղծել։

Միքայելյան հիվանդանոցի հոգեբուժական բա-  
ժանմունքը գտնվում է Կուրի ափին, Վերայի կամրջից  
վոչ հեռու։ Վերին հարկի արտաքնօցի լուսամուտը  
նայում եր դեպի Կուրը և վանդակապատ եր, ինչպես  
և հիվանդանոցի մյուս լուսամուտները։ Բոլոր կշռա-  
դատումներից յերևաց, վոր փախստի համար ամենից  
հարմարը արտաքնօցն եր. միայն անհրաժեշտ եր վո-

ըոշ աշխատանք կատարել վանդակը կտրելու համար: Կամոն անցնում ե զործի: Կամուի հաճախ և լերկարատե մնալն արտաքնոցում՝ վոչ վոքի չեր զարմացնում. բոլոր ծառալողներին քաջ հայտնի լեր, թե ինչպես հոգեկան հիվանդները այնտեղ ժամերով զրտղվում են զանազան զազրելի արարքներով: Կամոն քաջ ուսումնասիրած լինելով այդ թշվառների վարքն ու բարքը, այնպիսի վարպետությամբ եր տանում զործը արտաքնոցում, վոր ընավ հանկարծակիի չեր զալիս: Կամոն հսկողությունից ազատ ըոպեներին Բրագինի միջոցով զաղանի ստացած բարակ ու սուր սղոցով (լորզիկով) սկսում ե սղոցել վանդակը: Այս աշխատանքը լերեք ամիս տևեց: Վերջապես, 1911 թ. ոգոստոս տմսին մի շող որ, լերը հիվանդանոցում տոթից նեղված հետճաշյա հանգստի ելին անձնատուր յեղած, կամոն հանում ե իր վրայից նախապես սղոցված շրթաները, հակնում ե զրսից նրան հասցրած սովորական հազուստը և արտաքնոցի լուսամուտից թոկով ցած ե իջնում կորի ափի, թոկը փտած լինելով կտըրվում ե և կամոն հինգ արշին բարձրությունից ընկնում ե խճի կույտի վրա. սակայն իսկուէն վոտքի լեկանգնում, զետի բազուկով անցնում ե զետի ծանծաղուտը, այնտեղից կամրջի տակ և ապա՝ բարձր ափի: Այն ընակարանը, վորտեղ նա պիտի թագնվեր, անհուսալի դուրս լեկավ, և նրան պատահական կերպով ապաստան տվեց մի խեղճ կին, նրա նախկին ընկերոջ մայրը: «Ժողովրդի զավակ» այս կիսազրազետ կինը շատ խելացի ու հնարագետ գտնվեց, վորովհետեւ չափաղանց դժվար եր ընակիչներով լի տան մեջ մի քանի որ շարունակ մարդ թազցնել<sup>10)</sup>:



Հոգեբուժական հիվանդանոցը Թիֆլիսում, Կուր զետի ափին:  
Ըսկ Կամոն լուսամուտից թոկով ցած ե իշխում, իսկ զետի այլ ափից  
Նրան հետեւվում ե ընկ. Կոտե Ցինցաձեն, վոր 1911 թ. սպաստ. 15-ին  
ընկ. Կոմոի հիվանդանոցից փախուստ կազմւկերպողն եր:  
(Վրացի նկարչի նկարից)

Այստեղից Կամոն տեղափոխվեց անկուսակցական մեկի մոտ, վորի սարի վրա զո՞նված փոքրիկ տնակը շրջապատված եր պարտեզով ու ալզով։ Տնատերը տարորինակ, մենակյաց, հասակն առած պաշտոնյա յեր և միանգամայն վստահելի մարդ։ Այս բնակարանում տանտիրոջից ու նրա հյուր Կամոյից բացի վոչ վոք չկար։ Կամոն մնաց այստեղ մի ամրողջ ամիս առանց տնից դուրս գալու։ Հյուրասեր տանտիրոջն ամեն տեսակ վտանգից զերծ պահելու համար Կամոն հեռանալուց առաջ, խիստ մտածված կերպով և խնամքով ծածկեց իր՝ այդ տան մեջ մնալու բոլոր հետքերը։ Բարեբախտաբար բնակարանն աչքից ընկած մի վայրումն եր, և տանտիրոջը չանհանգտացրին։

Մինչդեռ դժբախտ Բըրագինը, վոր փախստի նախորդ որը արձակուրդ եր գնացել ու թագնվել, շուտով բռնվեց և դատապարտվեց հինգ տարով աքսորի Սիրիը (այս ժամանակամիջոցում մորաքույրը՝ Լիզան ամեն ամիս նրան դրամ եր փոխադրում)։

Զինվորական դատախազը տեղեկանալով Կամոյի փախստյան մասին՝ անչափ զայրացավ և խիստ հանդիմանություն արավ հիվանդանոցի գլխավոր բժշկին։ Վերջինս իրան արդարացնելու համար շեշտում եր կեղծարարի արտասովոր վարպետությանը, վոր կարողացավ մոլորեցնել անգամ Բերլինի պրոֆեսորներին։ Այսպես թե այնպես, վոճրագործը ձեռքից գնաց, և նրան բռնելու համար գործ դրվեցին բազմատեսակ միջոցներ։ Քաղաքն ողակվեց. քաղաքից դուրս գալը, ինչպես և յերկաթուղի նստելը շատ բարդ և խիստ հսկողության տակ դրվեց։

Սակայն չկա այնպիսի հսկողություն, վոր ան-

հնար լինի նրան զանց չառնել: Յեվ ահա ամեն որ,  
Մցխեթի խճուղին դուրս յեկող փողոցի վրա սկսեց  
յերևալ հեծանիվով զբոսնող գիմնազիստների և ջահել  
որիորդների փոքրիկ խումբ: Պահակի զինվորները զը-  
վարձանում եյին դրտելով յերիտասարդների այս վար-  
ժությունները: Յերբեմն այս կամ այն հեծանիվավորը  
վոգնորվելով անց եր կենում քաղաքի գծից այն կող-  
մը. և նրան կանգնեցնում եյին կանչելով. «Զի կարե-  
լի, քաղաքի գծից դենը չե թույլատրվում, յետ ան-  
ցիր»: Ամենորյա, սովորական դարձած այս տեսարա-  
նը արդեն ձանձրալի յէ դառնում. զինվորներն այլիս  
ուշք չեն դարձնում հեծանիվավորների վրա, և յերբ  
մի անգամ քաղաքի գիծն անցկացած հինգ հոգուց  
միայն չորսն են վերադառնում, վոչ վոք չի նկատում  
այդ:

Կամոն գիմնազիստի տարապով, հեծանիվ նստած  
սլանում ե դեպի Մցխեթ: Այդ որը Մցխեթում հարսա-  
նիք կար և քեֆները տեղը իշխանները խաղ ու պա-  
րով, ազգային յերաժշտական գործիքների նվազակ-  
ցությամբ անցնում են փողոցե փողոց: Ամեն մի հյուր,  
կովկասում ընդունված սովորության համաձայն, ի-  
րավունք ունի իր հետ խնձույքին բերել իր ծանոթ  
մեկին: Յեվ ահա կամոն գիմնազիստի համազգեստը  
փոխելով կովկասյան ազգային տարապի, ընկնում ե  
քեֆ անողների մեջ: Յերեկոյան հարսանիքավորները  
ցրվում են և խմբով շարժվում դեպի յերկաթուղու-  
կայարանը: Կամոն հաջողությամբ նստում ե գնացք  
և անվտանգ հասնում ե Փարիզ <sup>(1)</sup>) Վլագիմիր իլյիչի  
մոտ: Իլյիչը տեսնելով կամոյի առողջության քայլայ-  
ված վիճակը, պահանջում ե, վոր նու հանգստանա և

ստիպում և բժշկության համար վերցնել խոշոր գումար, Կամոն ըստ իր սովորության, իր վրա ծախսում է շատ չնչին դումար միայն, վորովհետեւ ապրում և ճանապարհորդում եր պրոլետարի նման։ Նա ուղևոր վեց հարավ, — Բուլղարիա և Հունաստան<sup>124</sup>)

## 7. ՐԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Մի քանի ամսից հետո, Կամոն Վլադիմիր Իլյիչ համաձայնությամբ նորից ուղեվորվեց Ռուսաստան, վորպեսզի փող ճարի կուսակցության համար, վորաց միջոցին նյութական սուղ պայմանների մեջ եր կովկասում Կամոն նորից սկսեց հավաքել իր մարտիկներին. բայց լավերից քչերն ելին մնացել, մինը հեռացել, մյուսը մահացել, յերրորդը աքսորում կամ բանտումն եր. Կոջորի խճուղու վրա 1912 թ. սեպտեմբերին կազակների ուղեկցությամբ դրամ փոխադրող միուսը կողոպտելու ձեռնարկությունը անհաջողության մատնվեց։ Ամենավճռական ըոսեյին մարտիկներից չորսը փախան, իսկ հինգերորդը վիրավորվեց։ Քաջարի, զարմանալի սառնասիրտ և բացառիկ վարժ նշան գցող հին մարտիկ Բաչուա Կուպրիավիլու, ինչպես և Կոտե Ցինցաձելի շնորհիվ միայն ապահովվեց Կամոյի ու վիրավորի նահանջը և այդպիսով սրանք ազատվեցին անխուսափելի մահից կամ զերի ընկնելուց։ Կամոն այս անհաջողությունը հիշելիս ամենից շատ ցավում եր այն ժամանակ սպանված յոթ կազակների մասին։ Այս մարդը, վորի ձեռները հաճախ թաթախվում ելին արյան մեջ, ատուժ եր սպանությունը<sup>\*).</sup>

<sup>\*</sup>) Ծանոթություն Ա. Յենուկիձեյի. — Ինձ թվում ե, վոր այ

Կամոյին նորից նստեցրին Մետեխի քերդը, և կարճ ժամանակից հետո տեղի ունեցած դատը մահվան չորս վճիռ կայացրեց. առաջինը 1905 թ. զինված ապստամբության համար, յերկրորդը՝ Յերեվանյան հրապարակի եքսպրոպրիացիայի համար, յերրորդը Միքայելյան հիվանդանոցից փախչելու և չորրորդը, կոջորի խճուղու վրա կատարած եքսպրոպրիացիայի փորձի համար։ Սովորաբար մահվան վճիռը ի կատար եր ածվում հայտարարման որից մի ամիս անց, կամոն յերբեք այնչափ ուրախ, հանգիստ և անհոգ չի յեղել վորքան այս շաբաթներին։ «Հեղափոխության համար յես արի այն ամենը, ինչ վոր կարող եյի. սրանից հետոն իմ ձեռքին չե արդեն», մտածում եր նա։ Յեվ փախստի մասին խռով մտքեր այլես չեցին խանգարում նրա քունը. վորովհետև կալանքի այն պայմանները, վորոնց մեջ նա գտնվում եր, անհեթեթ եյին դարձնում փրկվելու ամեն մի հռւմ<sup>13</sup>։

Սակայն փրկությունն այնուամենայնիվ յեկավ։ Այսպես. դատախազ Գալիցինսկին կամոյի գործն ուսումնասիրելու և նրա հետ մի քանի անգամ զրուցելու առիթ ունենալով՝ այնպիսի հիացմունքով և համակրանքով համակվեց դեպի այս արտասովոր մարդը, վոր նրա փրկության համար հանձն առավ որենքի դեմ գնալ։ Մոտենում են Ռոմանովյան տան յերեք հարյուրամյակի հանդեսները։ Յեվ ահա կամոյի անակնկալ պաշտպանը դատավճռի հաստատումը ձգձգեց

պատմվածքի մեջ անձտություն կա։ Անհաջողությունը հետևանք եր վոչ թե մի քանի մարտիկների «փախստի», այլ այն բանի, վոր մեր մարտիկները դարանի վայրը յեկան ուշ և յերկու խմբով։ Գործողությունների անհամաձայնեցումն եր այս միայն։

մինչև մանիֆեստի հրապարակումը։ Այս քայլի համար Գալիցինսկին նկատողության արժանացավ և մվասվեց նրա ապագան։ Իսկ Կամոյի մահվան պատիժը մանիֆեստով փոխարինվեց քսան տարվա տաժանակիը աշխատանքի։

1915 թվին նրան փոխադրեցին Խարկովի տաժանակիը բանտը, վորտեղ նա տեղավորվեց Քընյական հանցավորների հետ։ Սոսկալի ելին կարգերը, Կալանավորները յերկար ժամերով նստած պարտադիր աշխատանքներ եյին կատարում։ սպիտակեղեն, հագուստ և վունտամաններ կտրում, կողով հյուսում և այլն։ Այսպես Կամոն առիթ եր ունենում յերկար ժամանակ «թշվառների աշխարհի» տիպիկ ներկայացուցիչներ՝ զանազան «Իվանների» շրջանում լինել։ Արհեստանոցում և բակում տեղի ելին ունենում զաղըելի տեսարաններ, վորոնք ցույց ելին տալիս քրեական տաժանակիր բանտի վայրագ բարքերն ու հոգեկան սնանկությունը։ Անկախ այն վտանգից, վոր կարող եր նրան սպսոնալ բանտարկյալ ընկերների կողմից, մշտական վտանգ կարելի յեր սպասել բանտի իշխանությունից, քանի վոր վերջինիս կողմից հասցրած ամեն մի վիրավորանքին Կամոն կպատասխաներ մահցու հարվածով։ Իսկ սրա հետևանքը, պարզ եր, թէ ինչ կլիներ, Կամոն շատ շուտով յուրահատուկ կերպով գնահատվեց բանտարկյալների կողմից և ստացավ «Մեծ Իվան» կոչումը։ Այս «աստիճանի» շնորհիվ նրա վիճակը վորոշ չափով լավացավ։ Վորպեսզի իշխանության հանդիպելիս գլխարկ չհանելու համար ընդհարումների տեղիք չտա, վոչ ել իր ինքնասիրության վիրավորանք հասցրած լինի, Կամոն միշտ, անգամ

սաստիկ սառնամանիքներին գլխաբաց եր դուրս գալիս: Բարեկամների հետ ունեցած հազվագյուտ տեսակցությունների ժամանակ վորքան ել նա ճգնում եր ուրախ ու աշխույժ ձևանալ, սակայն նրա հայացքի մեջ խոր թախիծ եր յերեսում: Տաժանակիր աշխատանքը, ըստ յերեսույթին, սպանում եր նրան: Նրան հատուկ հոգեկան պայծառությունը և առողջ դատողությունը կարծես դավաճանում ելին նրան և նա փախուստի ցնորամիտ ծրագրներ եր կազմում: Դժվար եր ասել, թե ինչ վախճանի կհանգեր նրա այս տանջալի գոյությունը, յեթե վերահաս հեղափոխությունը չազատեր նրան:

## 8. ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

1917 թ. մարտի 6-ին ազատվելով բանտից, նա յեկավ Մոսկվա և ապա Պիտեր: Մայրաքաղաքներում յեռում եր քաղաքական կյանքը, և այստեղ միայն կամոն նկատեց, թե վերջին չորս տարվա բանտարկությունն ինչքան ուժ և առողջություն եր խլել նրանից: Վլադիմիր Իսիչը ստիպում եր նրան կովկաս մեկնել և առաջին հերթին մտածել իր առողջության մասին: Այն աստիճան նա իրան թույլ, հիվանդ և վորմե գործի համար վոչ պիտանի յեր զգում, վոր մի անգամ թիֆլիսում, կուր գետի կամրջով անցնելիս մի պահ կամոն մտածեց իրան զցել ջուրը և վերջ տալ իր կյանքին: Սակայն լեռնային բուժարաններից մեկում վեց շաբաթ մնալուց հետո, նրա հոյակապ կազմվածքը հարավային արևի տակ նորից կենդանացավ և կամոն վերադարձավ թարմ, աշխույժ, առաջվա պես զվարճախոս և սրամիտ կատակարան: Մեպոհմքերին նա

մեկնեց Բագու։ Այստեղ նա աշխատում եր Բագվի խորհրդում և Արտակարգ Հանձնաժողովում։ բացի այդ, տանում եր նաև շատ պատասխանառու գաղտնի աշխատանք։ 1919 թ. մայիսին, մի խումբ խիզախ ընկերների հետ ձեռնարկում ե «Խելքից դուրս, բնության դեմ» մի քայլ—նավակով գաղտնի կասպից ծովով գնում հասնում Աստրախան, այնտեղից ել յերկաթզծով—Մոսկվա։

Կուսակցության կենտրոնը այստեղ հանձնարարում ե կազմել տերրորիստների մի խումբ Դենիկինի թիկունքում գործելու համար։ Այս նպատակով կամոն կուսակցական յերիտասարդներից կազմակերպեց մի ջոկատ և անձամբ զրադից պատրաստությամբ առաջիկա ծանր և չափազանց լուրջ գործի համար։ Նրա հիշողության մեջ դեռ թարմ եր կոջորի խճուղու վրա ունեցած իր անհաջողությունը. ուստի և վճռեց այս անգամ իր ջոկատն ընդունել միանգամայն վստահելի տարրեր։ Կամոն հարուստ յերեակայության տեր մարդ եր, և ահա իր ապագա աշխատակիցներին ստուգելու համար այսպիսի փորձ կատարեց։ Մի գեղեցիկ որ ամբողջ ջոկատը ուղևորվեց Մոսկվայից մի քանի տասնյակ վերստ հեռու՝ քաղաքից դուրս ազատ միջավայրում վարժություններ կատարելու հտմար։ Ցրվեցին անտառում։ Հանկարծ, մոտակայքում գտնված սպիտակների մի բանդա նկատում ե նրանց և ողակում անտառը. («սպիտակների բանդա» ներկայացնողը կարմիր պարտիզաններ ելին զարդարված ուստղիրներով և շքանշաններով, իսկ նրանց «պետը» կամոն եր՝ սպիտակ սպազի գրիմով), Թույլ զինված յերիտասարդ մարտիկները, ինչպես իրենք հավատացած են,

ընկնում են թշնամու ձեռքը: Յեվ ահա այստեղ սկըսվում և նրանց հեղափոխական հոգու քննությունը: Կարծեցյալ սպիտակների սարսուռ ազդող միջավայրում կատարած խիստ քննությունն այն աստիճան վախեցնում ե մի քանիսին, վոր նրանք հրաժարիմք են ասում, փուչ են դուրս գալիս և իրանց կաշին փրկելու համար անկեղծորեն պատմում են ամեն ինչ. սակայն շատերը, վորոնց թվում մի քանի կոմունիտա աղջիկներ, իրանց պահում են ամեն գովեստից բարձր:

Ահա այս կերպ ընտրված հերոսական խմբակի գլուխն անցած կամոն ուղևորվում ե դեպի հարավ՝ Ռոստովի անսպասելի անկումով նրա ըոլոր հաշիվները խառնվեցին: Նախագծված ծրագիրը հարկ յեղավ փոխել և դրա համար անհրաժեշտ եր մեկնել Վրաստան: Կամոն իշխան Ցուլուկածե անվամբ հազիվ եր Թիֆլիս վոտք կոխել, վոր ձերբակալվեց մենշևիկյան կառավարության կողմից, վորի անդամներին յերբեմն ինքն անձնվիրաբար ազատում եր փորձանքներից, և վորոնց փախուստն եր կազմակերպում: Նրան նորից նստեցրին իրեն լավ ծանոթ՝ Մետեխի բանտը: Կամուլին այստեղ յերկու ամիս պահեցին խոնավ նկուղում, վորտեղ նա ստացավ նստալին ներվի քրոնիքական բորբոքում: Այն ժամանակվա կյանքի տեսնդային թափից յելնելով՝ յերկու ամիսը յերկար միջոց եր: Իրերի վիճակը փոխվեց և կամոն, ցավ ի սիրտ, ստիպված յեղավ թողնելու իր ճարպիկորեն ծրագրած գործը: Վրաստանից նա նորից անցավ Բագու, ընդհատակյա աշխատանք տանելու Ռազմահեղափոխական շտաբում՝ ապստամբություն կազմոկերպելու և քաղաքում բանվորագլուղացիական իշխանություն հաստատելու

համար։ Այս շրջանում կամոյի համար վերսկսեց յերբեմնի ընդհատակյա կյանքը՝ սրանից բղխող բոլոր վերապրումներով։ Գործը հաջողությամբ պսակվեց և կարմիր բանակը մուտք գործեց Բագու 1920 թ. ապրիլի 27-ին։

Կամոն այժմ կարծում եր, վոր հասել ե ժամանակը իր վազեմի իղձերը իրականացնելու և իր գիտության պաշարը լրացնելու։ Վլադիմիր Իլյիչը հավանություն տվեց նրա այս ցանկությանը և առաջարկեց պատրաստվել Ընդհանուր Շտարի Ճեմարանը (Ակադեմիա Գեներալյոց Շտաբա) մտնելու։

Եատ անգամ ելին կամոյին առաջարկել բարձր պատասխանատու պաշտոններ, սակայն նա միշտ հրաժարվում եր, մասամբ համեստորեն իրեն վոչ պատրաստ համարելով, մասամբ ել իրեն խորթ զգալով «իշխանավորի ու ստորադրյալի» միջավայրում։ Նա իր պայծառ խելքի շնորհիվ կարողանում եր հրաշալի կերպով թափանցել զանազան քաղաքական խնդիրների ելությունը։ յերբ կուսակցության առաջ ծառացավ «Բրեստի հաշտության» պրոբլեմը, և յերբ ավելի լուրջ տեսական պատրաստություն ունեցող ընկերներից շատերը դժվարանում եյին լելք գտնել, կամոյի համար այդ յելքը պարզ եր։ Նույնը կատարվեց նաև նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու ժամանակ, վորը սակայն շատ ծանր հոգեկան ապրումներ պատճառեց նրան։ Նա չափից դուրս զայրանում եր, յերբ այս ու այնտեղ նկատում եր կոմիսարակալություն և բյուրոկրատիզմ։ Իր նկատմամբ ծայրահեղ պահանջկոտ և խիստ լինելով, նա իշխանության զըլուխ կանգնածներից շատերին հանդիմանում և բա-

ցարձակ յերեսով եր տալիս նրաց վարած կյանքի համար:

Նա շատ սրտառուչ վերաբերմունք ուներ դեպի ընկ. Անինը, վորին նա սիրում եր վոչ միայն վորպես հանճարեղ առաջնորդի, այլ և վորպես իրեն մըտերիմ, թանկագին մարդու: Իր կյանքի վերջին տարիներում նա սակավ եր առիթ ունենաւ պետուկան գործերով չափազանց զբաղված ընկ. Անինին հանդիպելու. և յերբ նրան այդ հաջողվում եր, պետք եր տեսնել, թե ինչպիսի հրճանքով փռյլում եր նրա դեմքը, ինչպիսի քնքշություն եր ցոլում նրա աչքերի մեջ:

1922 թ. ամրան, Թիֆլիսում, հունիսի 14-ին, գիշերվա 11 ժամին կամոն հեծանիվով իշխում եր Վերայի վայրեջքով: Մթության մեջ վրա պրծնող ավտոմոբիլը շպրտեց նրան դեպի լապտերի սյունը, և յերկու ժամ անց կամոն մահացավ առանց զիտակցության գալու:

Կովկասի պրոլետարիատը իր մարտիկի հռչակա- կավորությունը կազմակերպեց այսպիսի շքեղությանը՝ վորպիսին Թիֆլիսը չեր տեսնել մինչ այդ: Եթա անյունը հողին ե հանձնված Պուշկինյան պարտիվում:

Կամոյի անունով կոչվում են այն փողոցը, վորտեղ նա ապրում եր, մի մանկատան, մի ձեռնարկություն և քաղաքային հիվանդանոցը՝ Թիֆլիսում, մի քանի հանգստյան տներ Վոլկանյան բուժաբաններում և մի շողենավ:



## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմեց Ա. Զոնին)

Այս ծանոթություններով քնակ չեն տպառվում մեզ հայտնի ըոլոր փաստերը Կամոյի կանքի մասին. բացի այդ, կենսագրական նյութեր դեռ չեն հավաքվում են. Այսպես, որինակ ընկ. Կամոյի կատարած տերրորիստական գործողությունների մասին մենք քնակ բան չենք կարող առել. Դատ սակայ են մեր տեղեկություններ ընկ. Կամոյի արտասահմանյան կյանքի մասին, կուսակցության ժրների արխիվի մանրակրկիտ ուսումնասիրությունը միայն կարող է լրացնել այդ բացը:

1. Ընկ. Կամոյի դպրոցից արտաքին մասին ընկ. Կոտե՞ Ցինցածեն պատմում է, ոի միզաման Կամոն կրոնի դասի ժամանակ հարց է տաճու քանանային. «Քրիստոսը իրո՞ք զոյտթյուն է ունեցել, թեվ արդյոք ճիշտ է, վոր յերկնքից և իջել քերելիք». Ամսակ փափուկ հարցեր հավանութեան առաջին ամպամ չեր, վոր տրվում ելին. Քահանան դպրոցական վարդության առաջ Կամոյին ներկայացրեց վարպետ գոտագավոր, վատ վարքի տեր հանդուպեան ազատախոն մեկը յեվ այսպիսով Կամոն դպրոցից դուրս քնակ. Այդ ժամանակ 14 տարեկան եր, ուրեմն նա դպրոցից վոնդվել է 1895 թ. (Կ. Ցինցածեի ձեռագիր նիշողությունները).

2. Վրացական կուսակտի «Ենդափոխության

տարեղիր» որգանի №4-ում ընկ. Զոդրիաշվիլին հետաքաջան գծեր եւ հաղորդում Կամոյի կուսակցության մեջ մտնելու ժամանակի մասին. Նրա ասով, այդ տեղի յեւ ունեցել 1897 թ. (այսպիսով հառատափում եւ նույնապես, վոր Կամոն Ներսիսյան դպրուցից տվելի վաղ եւ արծակվել):

Զոդրիաշվիլու արհեստանոցն եւ բերում իր ընկեր Զարրոն «16 կամ 17 տարեկան մի յերիտասարդ»

— Եհան սիրելիս, քեզ մոտ բերել եմ մի յեռանդուն ընկեր յեւվա:

Կամոն Զոդրիաշվիլու նետ ունեցած զրոյցի ժամանակ զերծ կերպով խոսում եւ կուսակցության մեջ աշխատելու իր ցանկության մասին, յեվ հեղափոխականներին սպառնացող վտանգների մասին արված դիտողություններին նա պատասխանում է.

— Քանի գլուխ վրաս եւ, չեմ իմանա վախն ինքան եւ:



Հենց այդ որվանից նա սկսեց զրականություն փոխադրել Նախարարության արվարձանից (Նածալաթելին նեղափոխության բանի բույնեւու թիֆլում:)


Յ. Կամոն մասնակցեց 1903 թ. ապրիլի 27-ի ցույցին, Ազգ ժամանակ շատ ուշագրավ եյին Կամոյի յերիտասարդական հանդուգն բայլերն ու մտածումները Անտեսելով շրջազարդ կազակներին նա անցու դարձ եր անուն՝ հրապարակի վրա յեվ մըտածում, ոմյուս անզամ յիս կզնեմ մի քանի տասնյակ ազուագներ. Արանցից կախ կտամ կարմիր ժապավեններ յեզ նշանակած ժամին բաց կթողնեմ. թող այն ժամանակ ցրեն այս զուգարաններին: Յերբ նշան կազմության 12 ժամը հասավ, Կամոն բարձրացրեց կարմիր

W.H.

6

504.







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035289

A π  
35289